1890-1900

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՄԱՆ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԴՐՕՇԱԿ

ՏԱՍՆԱՄԵԱԿ

№ I

1901

ԺԸՆԷՎ

„ԴՐՕՇԱԿ“ ՆԵՐԿԱՅ ՀԱՄԱՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

(Բաղկացած 32 երեսից եւ „Յաւելուածից“)

		Երես
1.	ՏԱՄՆԱՄԵԱԿ (1890 1900)	1
2.	ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԱՄՆԱՄԵԱԿԻՆ	4
3.	ԱՆՑԱԾ ՕՐԵՐ ԴԱԼԻՔ ՕՐԵՐ	6
4.	ՎԵՐՋԻՆ ԺՊԻՏԸ	9
5.	ՏԱՄՆԱՄԵԱԿԻՆ ԱՌՋԵՒ	10
6.	ՀԱՑԿԱԿԱՆ „ԿԱՐՄԻՐ ԽԱՉ“	11
7.	ՀԱՑԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ	12
8.	ԳՈՐԾՈՂՆԵՐ (32 նկար)	13
9.	ՔԱՑԼԸ-ՆՔ	29
10.	ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՈԳԻՆ	29

ՅԱՒԵԼՈՒԱԾ (8 երես)

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Ապստամբական ոգի (սպառուած)։
2. Յեղափոխական կեանքից (սպառուած)։
3. Գաղտնի տպարան (սպառուած)։
4. Գիտական սոցիալիզմ. Ֆ. Էնգելս։
5. Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագիր։
6. Կուկունեանի խմբի արշաւանքը։
7. Կարնոյ յիշատակին (չորս հատուած)։
8. Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիր (արեւմտ. բառ.)։
9. Homo homini lupus. Վարդգէս։
10. Երիտասարդներին. Պ. Կրապօտկին։
11. Ազատութեան ճանապարհին. Ղարիբ։

„Դրօշակ“-ի խմբագրութեան մէջ ծախւում է նաև „Սոցիալիզմ և սոցիալական շարժումը 19-րդ դարում“. Վ. Զօմբարտ։ Հրատարակ. Ժընէվի հայ ուսանողների։

Այս գրքոյկները ստանալու համար դիմել

Rédaction du „Droschak“, Genève (Suisse)

№ 1 (112) XI ՏԱՐԻ ՅՈՒՆՈՒԱՐ 1901

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՏԱՍՆԱՄԵԱԿ



1890-1900

„Դրօշակի" ներկայ համարը նուիրելով „Դաշնակցութեան" տասնամեակին, մենք շատ հեռու ենք տօնական տրամադրութիւններից։ Սուգի օրերին տօնախմբութիւններ չեն կատարուում, իհարկէ։ Մեր միակ ցանկութիւնն է՝ „Դաշնակցութեան" երկրորդ տասնամեակը ոտ դնելիս՝ անդրադառնալ ընդհանուր դրութեան վրայ՝ այնպէս, ինչպէս իւրաքանչիւր տարուայ սկզբին այդ անում ենք նախորդ տարուայ վերաբերմամբ։ Պատմութիւն էլ գրելու ժամանակը չէ։ Դա անշուշտ բաժին կը մնայ ուրիշ օրերի, երբ գործնական կեանքի պահանջները չեն կլանի մեր բոլոր ուժերը և երբ իրականութեան հեռաւորութիւնը հնարաւորութիւն կը տայ աւելի սառնասիրտ վերաբերուել անցած-դարձածին։ Վերջապէս մենք չենք շոշափի այստեղ մեր տասնամեայ անօրինակ կեանքի բոլոր էական կողմերը՝ մասամբ անկարելի համարելով այդ մէկ յօդուածի մէջ, մասամբ էլ զանազան գծերը շեշտուած գտնելով ներկայ համարի ուրիշ յօդուածներում։ Մենք կը բաւականանանք միայն ընդհանուր մի հայեացք ձգելով իրար հետ մրցող այն քաղաքական տարրերի վրայ, որոնք պայմանաւորեցին մեր կռիւն ու կորուստները և որոնց փոխադարձ յարաբերութիւնները ներկայումս՝ վճռական դեր պիտի խաղան նաև ապագայում։

—

Հայեր, տաճիկ կառավարութիւն և Եւրոպա՝ իրենց այլազան ձգտումներով և շահերով, — ահա այդ տարրերը։

Հայերը, հալածուած և նեղուած, բայց քաղաքակիրթ կեանքի ընդունակութիւններով ու հակումներով օժտուած, ձգտում էին պատմական բեմ դուրս գալ՝ իրենց անտանելի դրութեան պարզ գիտակցութեամբ, ոգևորուած լաւագոյն կեանքի կախարդիչ հեռանկարով։ Իբրև բողոքող՝ հայ ժողովուրդը սակայն ռազմական ուժ չէր ներկայացնում։ դարաւոր ստրկութեան մէջ մաշուած, անվարժ կռուի գործին և հարուստ եսական, վատառողջ բնազդներով, նա դեռ շատ հեռու էր այդպիսի դրութիւնից։ Արհամարհուած երկրի մէջ, մեր դիրքը նախանձելի չէր և արտաքին աշխարհի դիմաց. եւրոպական ժողովուրդների միջազգային կեանքում մենք ներկայանում էինք ընդհանրապէս կամ իբրև մի բոլորովին անյայտ ցեղ կամ բարոյական ստոր նկարագրի՝ վաշխառուական մի դասակարգ Արևելքում։

Տաճկաստանը դեռ 30-ական թուականներից „հիւանդ մարդու" անուն էր վաստակել և՝ ճակատագրական քայքայման ենթարկուելով, զրկում էր աստիճանաբար իր մարմնի զանազան մասերից, յօգուտ գլխաւորապէս փոքրիկ ազգութիւնների։ Իբրև պետութիւն՝ նա պահպանում էր իր դիրքը ոչ թէ յենուած երկրի ներքին ուժերի վրայ, այլ շնորհիւ այն հանգամանքի միայն, որ Թիւրքիայի ամբողջութիւնը հարկաւոր էր համարուում „եւրոպական հաւասարակշռութեան" համար։ Բայց և այնպէս, իբրև կազմակերպուած մի քաղաքական մարմին, նա ջախջախիչ մի ուժ էր իր հպատակ հայ ժողովրդի դիմաց։

Եւրոպական պետութիւնները երրորդ գործօնն էին հանդիսանում։ Այդ գործօնի վերաբերմամբ յայտնի էր նախ, որ այս կամ այն ձևով, այս կամ այն նպատակներով, նա առհասարակ առաջ է տարել տաճկական քրիստոնեաների ազատագրութիւնը, երբ այդ վերջինները կուել են յարատև։ Բացի դրանից՝ Եւրո-

պան մինչև 1878 թուականը երբէք տաճկահպատակ քրիստոնեաների վերաբերմամբ այն ձևի պարտաւորութիւններ չէր ստանձնել, ինչ Բերլինի դաշնագրից յետոյ։ Իրաւ է, Փարիզի դաշնագիրը Թիւրքիայի քրիստոնեաներին հովանաւորելու իրաւունք էր տալիս Եւրոպային, բայց և միաժամանակ հերքում էր Տաճկաստանի ներքին գործերին միջամտելու իրաւունքը՝ թողնելով քրիստոնեայ ազգերի դրութեան բարեփոխումը սուլթանի „վեհանձն բարեհաճութեան“։ Այն ինչ Բերլինի դաշնագիրը՝ հաստատելով հովանաւորութեան իրաւունքը, ընդգրկեց նաև միջամտութեան օրինականութիւնը։ Այստեղ սուլթանը արդէն պարտաւորուում էր մտցնել Եւրոպայի կողմից պահանջուող բարենորոգումները. այստեղ առաջին անգամ պետութիւնները պաշտօնապէս իրաւունք ստացան հսկելու բարեփոխումների գործադրութեան վրայ և անհրաժեշտ դէպքում՝ նոյնիսկ մտցնելու այդ բարենորոգումները հակառակ սուլթանական կամքին։ Եւ հայոց հարցը, յանձին 61-րդ յօդուածի, այդպիսի նոր ձևի պաշտպանութեան տակ էր դրուած, — մի ձև, որ կրկնում ենք, մինչ այդ տեսնուած չէր, որը գերազանցում էր մինչև 78 թուականը տեղի ունեցած ամէն տեսակ միջամտութիւններից։

—

Ահա այդպիսի հանգամանքներում էր զարգանում հայկական դատը։ Հայերը ինքնըստինքեան թէև թոյլ, բայց իրենց պաշտպան համարելով եւրոպական պետութիւններին, ամենավառ յոյսեր էին տածում դէպի ապագան։ Այդ յոյսերը չէին բաժանուում ընդհանուր առմամբ հայոց յեղափոխական շրջաններում և մանաւորապէս „Դաշնակցութեան“ մէջ, որը իր առաջին քայլերից ընդունեց ժողովուրդը զինելու, նրան ինքնապաշտպանութեան և կռուի պատրաստելու նպատակը՝ տալով եւրոպական քաղաքականութեան մի դեր, որը պիտի պայմանաւորուէր հայերի բողոքելու, պահանջելու, կռուելու ընդունակութիւններով։

Եւ իրականութիւնը մեզ բերեց այն, ինչ էր սպասուում։ Կրիտիքական րոպէին Եւրոպան մեզ մատնեց սուլթանի կամայականութեան, դէմ դնելով մեր պարանոցները թրքական եաթաղանին։ Նորաբողբոջ յեղափոխական գաղափարը, յենուած ժողովրդի և ինտէլիգէնցիայի մի չնչին փոքրամասնութեան վրայ, հալածուած անզգայ, ստրկամիտ մեծամասնութիւնից, անզօր եղաւ, չնայած իր բոլոր ճիգերին, ահաւոր չարիքի առաջն առնել, — և ահա խաղացուեց հայկական հրէշաւոր դրաման։ Հարուածն ու յուսախաբութիւնը անցան ամէն մի սահման, որ կարող էին երևակայել ոչ միայն հայերը — և դրանց թուում, խոստովանում ենք, նոյնիսկ ամենասկեպտիկ յեղափոխականները, — այլև ամենահեռատես քաղաքագէտները։ Սարսափ սարսափի ետևից, ջարդ ջարդի վրայ և դրա հետ միասին՝ արեան հեղեղներից խուսափած մնացորդների ամենօրեայ հալածանք ու տանջանք, ամենօրեայ շնչասպառ կեանք և անվերջ, անվերջ մարտիրոսութիւն, — ահա մեր տասնամեայ կեանքի արտաքին ընդհանուր նկարագիրը։

Վերին աստիճանի ծա՜նր, վերին աստիճանի մռայլ պատմական մի շրջան... Ակամայ հարց է ծագում՝ ո՞ւր է ելքը, ո՞ւր է տանում մեզ պատմութիւնը։ Մի՞թէ դէպի կորուստ։ Իրենց ահաւոր ծանրութեան հետ միասին նոյն տխուր օրերը չտի՞ն արդեօք ոևէ ժառանգութիւն, որ թոյլ չպիտի տայ մեզ թունաւոր կասկածներ տածել դէպի ապագան։

Դրան պատասխանելու համար կրկին դառնանք հայ-թիւրք-եւրոպական յարաբերութիւններին։

—

Հայը, իհարկէ, թէ իր տնտեսական ուժով, թէ թուով՝ այսօր երկրի մէջ աւելի աննպաստ, աւելի վատթար դրութեան մէջ է, քան մինչև կոտորածների շրջանը։ Նրա տուած զոհերը, նրա կրած կորուստներն ու ներկայ թշուառ վիճակը յայտնի են մեզ։ Բայց նայենք դրամի միւս կողմը ևս։ Դժուար է ժխտել, որ այսօրուայ հայը այն անյայտ ազգը չէ, որի մասին աշխարհումս շատ քչերը գիտէին. նա իր գոյութեան բազմաթիւ ապացոյցներ տուեց այս տանջալից տարիների շարքում. նա այսօր այն հայն էլ չէ, որին մեծ մասամբ ուրիշ կերպ չէին անուանում՝ բայց եթէ „արևելեան կամ քրիստոնեայ հրէաներ“, „ստրկածին ազգ“ և այլն. նա տուեց „կեցցէ յեղափոխութիւնը“ գոռալով իրենց զոհող հերոսներ, որոնք սրբեցին հայութեան ճակատին դրոշմած պատմական արատը և գծեցին մեր բարոյական վերածնութեան ճանապարհը. „ֆլահը“ այսօր տեղ է տուել „ֆէդայուն“ և հայ յեղափոխականը դարձաւ անձնուիրութեան ու վճռողականութեան մի իդէալ թիւրքահպատակ ազգերի յառաջադէմ զաւակների համար։ Օտտոմանեան բանկի գրաւումը, Զէյթունի ապըստամբութիւնը, Խանասոր և Խաստուրները ապացուցին նաև, որ, իբրև կռուողներ, նոյնիսկ մեր թոյլ ուժերով, ընդունակ ենք յաղթական րոպէներ ունենալ թշնամու դիմաց։ Միաժամանակ՝ զանազան երկրներում կղզիացած հայերի մէջ՝ միայն մեր օրերում հաստատուեց և լայնացաւ այն գործնական կապը, որ այնքան կարևոր է մեր վերածնութեան համար և որի մասին երազել միայն կարելի էր սրանից 15-20 տարի առաջ։ այսօր համարեա տեղ չմնաց Թիւրքիայում, ուր ռուսահայը ոտք չլինի կոխած իր տաճկահայ եղբօր հետ. լեզուով անգամ այսօր յաճախ դժուար է զանազանել ռուսահային տաճկահայից։ Հայութեան նշանաւոր մասերը այսօր խառնուած, իրօք եղբայրացած են։ Դա բաւական չէ. մենք եղբայրներ — կռուի եղբայրներ — շահեցինք մեր շարժման ընթացքում նոյնիսկ ուրիշ ազգերի մէջ. հայ-մակեդոնական մերձեցումը այսօր մի փաստ է, որի նշանակութիւնը չի կարելի հերքել ոչ մի տեսակէտից։

Թիւրքիան, հայերի վերաբերմամբ թէեւ դեռ մեծազօր, նոյնիսկ աւելի կատաղած, վայրագ և անխնայ, բայց ընդհանուր տեսակէտից նա անպայման աւելի է ընկած քան մի տասնամեակ առաջ։ Կրէտէի ազատումը, օրինակ, երկու տարի առաջ միայն տեղի ունեցաւ։ Բայց դա չէ գլխաւորը։ Աբդիւլ Համիդի ըէժիմը անդրադարձաւ հայերից դուրս՝ նաև տաճիկ և ուրիշ հպատակ ազգութիւնների վրայ։ Դժգոհ Թիւրք և այլազգի տարրերը այժմ կազմում են մի նշանաւոր քանակ, և ներկայ կարգերի գոնէ առժամեայ փոփոխութիւնը Թիւրքիայում դարձել է մի պահանջ, որին եթէ կարողանայ էլ դիմադրել սուլթան Համիդը իր ձեռքի տակ եղած դիւային միջոցներով, սակայն այդ անկարող կը լինի անել հետևեալ կառավարութիւնը, որ պիտի յաջորդի նրան։ Այո, կընկնի այդ հրէշը իրեն արժանի բռնի մահով թէ ուրիշ տեսակ, այժմեան ըէժիմի փոփոխութիւնը—թէև իհարկէ կարճատև,—անկասկածելի է ամէն տեսակէտներից։ Դա մի անհրաժեշտութիւն է, որ պիտի իրականանայ իբր առժամանակեայ արգելաւոիթ միջոց Թիւրքիայի դրսից և ներսից պատառ-պատառ լինելուն։ Ներսից՝ Մակէդոնեայ, հայեր, Էպիր, արաբներ, ալբանացիք, նոյնիսկ ասօրիներ և քրդեր, դրսից՝ Ռուսաստան, Գերմանիա, Անգլիա և Աւստրիա, ահա Թիւրքիային սպառնող այն վտանգի դռները, որոնց աւելի և աւելի լայն բացւելուն դիմադրելու համար հարկաւոր է տրամագծօրէն հակառակ ուղղութիւն քան ներկան։ Եւ այդ, ինչպէս ցոյց են տալիս շատ նշաններ, գիտակցում են իրենց պետական քաղաքական դիրքը պահպանել ձգտող բոլոր Թիւրք հայրենասէրները։

Եւրոպան... պաշտօնական Եւրոպան, ինչպէս կոտրածների միջոցին, նոյնպէս և այժմ — մեր այսօրւայ դառն վիճակի դիմաց — շարունակում է լինել միաոտանի Թիւրքիայի երկրորդ ոտը, իսկ մեզ համար մատի նշանակութիւն անգամ չէ ուզում ունենալ։ Այո, այդ այդպէս է, բայց դա չէ նշանակում, որ այդպէս էլ կը մնայ դրութիւնը։ Պետութիւնները խուսափում են մեր օրերում Թրքական գործերին միջամտելուց ոչ թէ միջամտել չցանկանալով, այլ միմիայն այն պատճառով, որ շատերն են ուզում միջամտել և այդ շատերից իւրաքանչիւրը՝ աւելի քան միւսները։ Բաւական է, որ կայ այդ մրցումը, և եթէ մրցակիցներից մէկին կամ միքանիսներին ներկայանան յաջող պայմաններ՝ դա պիտի պայթեցնէ անշուշտ փոթորիկ Տաճկաստանի գլխին։ Եւրոպայի վերաբերումը դէպի Թիւրքիան մի տեսակ անընդհատ խուլ կռիւ դրութիւն է, որը չէ կարող ուրիշ ելք ունենալ, եթէ դեռ ևս հեռու համարենք ազգերի եղբայրակցութեան յաղթանակը։ Բացի այդ ընդհանուր պայմանից, սխալ կը լինէր ենթադրել, որ տաճկա-եւրոպական յարաբերութիւնները նոյնն են այսօր, ինչ մեզնից 10 տարի առաջ։ Ով հետևել է վերջին ժամանակները Թիւրքիայի հետ կապւած գերմանական, ռուսական, ֆրանսիական և այլ կօնսեսիօներին, չէ կարող չհամաձայնել, որ այդ իրողութիւնները բաց են անում Թիւրքիայի համար խաղաղ բաժանման մի նոր շրջան։ Երբ այդ շրջանը կաւարտի իր ընթացքը, այսինքն երբ կատարւած զիջումների համաձայն Թիւրքիայում կը հաստատւեն պետութիւնները, այն ժամանակ բնականաբար պիտի հանդէս գայ Թիւրքիայի իրական բաժանման խնդիրը, որը ահա մի ամբողջ դար է, ինչ ձգձգւում է, և որը արդէն նշանաւոր քայլեր արեց մեր օրերում։

Սակայն նոյնիսկ մի կողմ թողնելով պաշտօնական Եւրոպային, մենք չենք կարող մատնացոյց չլինել մի ուրիշ Եւրոպայի վրայ, որ ներկայ մռայլ օրերում գլուխ է բարձրացնում յօգուտ մեր դատի և այն՝ բաւական վստահ ու համարձակ, չնայած պետութիւնների անտարբերութեան և Համիդի դաւերին։ Հեռու չգնանք։ Մտաբերենք թէկուզ վերջին երկու տարիների ընթացքում „Դրօշակում“ տպւած հեղինակաւոր եւրոպացիների նամակները. յիշենք անցեալ տարւայ աշնանը Փարիզի համաժողովներում ընդունւած վճիռները մեր դատի առթիւ. ինկատի առնենք Pro Armenia-ի ձեռնարկութիւնը զուտ ֆրանսիական հասարակական գործիչների և գրողների ձեռքով և այն համակրութիւնը, որ գտան դրանք նաև Ֆրանսիայից դուրս. մտաբերենք այն դիմումը, որ արեցին վերջերս ֆրանսիական արտաքին գործերի նախարար Դելկասէին տարբեր կուսակցութիւնների այնպիսի ներկայացուցիչներ՝ ինչպէս Դէնի Գօշէն, Էստուռնել և Ֆուռնիէ, — և այն ժամանակ մենք կը տեսնենք, որ, այո՛, պաշտօնական Եւրոպայի կողքին ունենք այսօր մի ուրիշ Եւրոպա, որը եթէ մինչև իսկ չըստիպի առաջինին խոնարհեցնել իր սաղաւարտը արդարութեան առաջ, առնւազը՝ կ՚եռապատկի՛ այն դիմադրութիւնը, որ անհրաժեշտ է մեր դատի յաջողութեան համար։

—

Ահա թէ ինչու՝ կշռադատելով պայմանների ընդհանուր կազմը, „Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը“ այսօր ևս, իր երկրորդ տասնամեակի շէմքում, վառւած է ապագայի յոյսերով և պիտի շարունակի բարձր բռնել միանգամ պարզած կուի դրօշակը։

Այդ կռիւն է, որ մշտապէս կենդանի պահելով մեր խնդիրը, առաջ է քշում նրան դէպի իր բաղձալի լուծումը։ Այդ կռիւն է, որ արտաքին թէ ներքին ոևէ փոփոխութիւնների միջոցին Թիւրքիայում — լինի դա միջամտութիւն, պատերազմ, մի ներքին բարեշրջումն կամ պայթիւն—կը ստիպէ ում հարկաւոր է՝ հաշուի առնել նաև հայկական պահանջները։ Այդ կռիւն է, որ ներկայ ծանր հանգամանքներում, երբ հայութիւնը կանգնած է իսպառ հրէանալու վտանգի առջեւ, երբ մեր պատմական թշնամիները ձեռք ձեռքի տւած, կարծէք ըստ նախնական համաձայնութեան, ձգտում

են ոչնչացնել մեզ, — այդ կռիւն է, ասում ենք, որ կարող է զանազան վայրերում ցիրուցան հայերի լքման առաջն առնել և թոյլ չտալ դրանց կլանուելու տեղական սահմանափակ հոգսերի մէջ կամ օտար կեանքի հոսանքում և այդպիսով մոռանալ մեր ընդհանուր ժողովրդական, ազգային դատը։ Վերջապէս այդ կռիւն է միայն, որ կարող է խոստանալ մեզ ոչէ ապագայ, այնինչ հակառակ ընթացքը անպայման պիտի մղէ մեզ դէպի անպատիւ ու տմարդի կորուստ. Բաբկէն վարդապետի տեղակագիրը, որ զետեղում ենք ներկայ համարում, թող մեզ ծառայի իբր մի նմուշ երկրի այն ընդհանուր վիճակի, որի մէջ ժամէ-ժամ հալւում է հայութիւնը։ Տատանումը այդպիսի օրերում յանցանք է, լռութիւնը՝ մահ, անգործութիւնը՝ դատաճանութիւն...

Ցառա՜ջ...

Հայաստանի կարմիր հողերը, մեր նահատակների սուրբ յիշատակը, մեր ծով ցաւերի ամբողջ ծանրութիւնը, մեր օրհասական ներկայի բոլոր խորհրդաւորութիւնը — թո՛ղ չհեռանան երբէք մեր սրտերից և իբր հոգի առած ուրուականներ՝ անդադար կանչեն մեզ

Ցառա՜ջ, յառա՜ջ...

Հասկանանք պատմական բոպէի ամբողջ կարևորութիւնը, սեղմենք մեր շարքերը, յառենք մեր հայեացքները դէպի թշնամին և գոչենք նրա լսիրշ երեսին. „Հալածիր, կախիր, սպանիր. մենք չենք խնդրում խնայել մեզ, բայց մենք էլ քեզ չենք խնայի։ Մահու կռիւ ենք յայտարարել քեզ և պիտի շարունակենք։ Դու հպարտ ես քո բիրտ ուժով, իսկ մենք անմահութեան կնիքը ունենք մեր սրտերում։ Մենք ասում ենք. ընկիր, դահիճ. բացւիր, արշալոյս, — և դու կ'ընկնես կամ մենք կը կորչենք աշխարհի երեսից“...

„ԴԱԾՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ

Սազը չի թողնում, որ կտրիճ դառնամ,
Թուրը չի թողնում, որ գուսան դառնամ...

I

Գողթան քնարը, որ ազատութեան
Գովքը կը երգեր Մասիս սարն 'ի վե՛ր,—
Ա՜խ, շա՜տ վաղուց էր լուռ էր ու անձայն,
Ու գուսանները քուն էին մտեր,
Որոնց սրտերի արտուտն էր ճախրում
Երգելով Ազատ-Մասիս սարն 'ի վե՛ր։
Բայց երբ կտրիճի վա՛ռ սիրտը թնդաց
Սիրով, վրէժով հայրենի երկրի.
Երբ հրացանի կոչը որոտաց —
Կոչն ազատութեան Մասիս սարն 'ի վե՛ր, —
Գողթան քնարը նորից զնգզնգաց
Ու սիրտս ճախրեց Մասիս սարն 'ի վե՛ր։

II

ԳՈՒՍԱՆԸ. — Բարո՛վ ձեզի, հայ-ախպրտիք,
Հանց լեռ ու ժէռ դուք քովէ-քով.
Բարո՛վ ձեզի, հայ-քուրիկներ,
Հանց զարդ ու վարդ դուք քովէ-քով։
Մեր աշխարհէն ելէք, կուգամ —
Մութ սարերէն, խոր ձորերէն,
Կուի կարմիր տեղերէն։
Հանց կայծակը խոշոր ամպէն՝
Սիրտս օձոտ ու խոցոտ՝
Ձեր սրտի մէջ ահա կուգամ։
Արնոտ սիրտը վրէժ կուզէ,
Ով սիրտ ունի՝ դուրս ելնի.
Քանց թէժ-կրակ, վրէժ-կայծակ՝
Ձեր սրտի մէջ ահա կուգամ։

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ. — Բարո՛վ եկար, Գուսան ախպէր,
Մեր աշխարհի, անո՛ւշ բլբուլ.
Մեր աշխարհի հողն ես կոխեր,
Էդ սուրբ հողին մատաղ լինինք.
Արի, նստի մեր աջ կողքին,
Անուշ ձէնով սազ արա՛,
Մեր աշխարհի գովքն արա՛։

ԳՈՒՍԱՆԸ. — Հայ-ախպրտիք, հայ-քուրիկներ,
Մեր աշխարհի ի՞նչը մնաց, —
Հուրը գնաց,
Մուրը մնաց։
Ա՜խ, մեր ազգը, վա՜խ մեր աշխարհն
Մոխիր դարձեր, աւեր-աւար.
Մեր արտերում գերնդու տեղ
Եաթաղանն է հիմի զնգում,
Խաս հաւքերի ծիւ-ծիւի տեղ
Քոռ բուերն են վայում-վայում.
Քիւրդերի հետ սև գէլերն են
Մեր դաշտերում զուլում օռնում։
Ա՜խ, ժողովուրդն անտուն-անտէր,
Թափառական ու բնաւեր՝
Իր քրտինքով շեղջած ցորնէն
Կուտ կը մուրայ մեր դիւշմնէն...

Մեր դարդերը ծով են դարձեր.
Խորունկ դարդը երգ չունի.
Սրտիս լարերն են կտրտւեր,
Սիրտս ձեզի երգ չ'ունի։

Մի վայրի հաւք մի օր տեսաւ
Բլբուլ կուլար պուտ-պուտ արուն.
Ասաւ — „Ինչո՞ւ, սիրուն բլբո՛ւլ,
Ինչո՞ւ կուլաս պուտ-պուտ արուն.
Տես, սար ու ձոր, վարդ ու սմբուլ
Կարօտ քաշեն քու վառ ձէնին,
Իսկ դու ինչո՞ւ էս չոր չօրում
Ախ ու վախով կուլաս արուն“...
— „Ի՞նչ կը խօսիս, բլբուլն ասաւ,
Խենթ ու անդարդ վէրի թռչո՛ւն,
Դուն չ'տեսար դիւշմանն եկաւ,
Սևցուց դէմքը մեր արևուն.
Ձմեռ նստեց մեր սարերուն,
Ձորցուց ծիլերն ծաղկըներուն,
Արունն ելաւ, գո՛չ-գո՛չ գնաց
Մեր մայրերուն, ձագուկներուն“...

Է՜յ, ախպրտիք, մեզի համար
Կեանքն էլ ո՛չ մի երգ չ'ունի,
Քանի որ մենք սուգն ենք առնում

Մեր արիւնոտ աշխարհի,
Քանի որ մենք կոչն ենք լսում —
Կոչն հրեղէն վրէժի
Մեր մայրերի, քոյրերի...
Դուք չտեսաք, հայ-ախպրտիք,
Արունն ելաւ, գոչ-գոչ գնաց
Մեր մայրերուն, ձագուկներուն...
Խոցուած սիրտը վրէժ կոչէ,
Ճակատ-ճակտի, դիւշմի դէմ
Ո՛վ սիրտ ունի՝ թող ելնի։

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ. — Գուսան ախպէր, անուշ բլբուլ
Մեր ախպրտանց դարդի ծովէն
Արնոտ ալիք, սգի ձէներ
Վաղուց է որ մեզ հասեր են,
Մենք մեր կեանքով էնոնց մատալ,
Մենք ամէնքս մեր աշխարհի,
Մեր ախպրտանց սուրբ ուղուրին.
Ա՜խ, վաղուց է՛, Գուսան ախպէր,
Մեր աշխարհի, մեր սարերի
Անո՜ւշ գովքը չենք լսեր.
Մեր Մասիսէն, մեր Արազէն
Փափագ-պապակ կարօտ ենք.
Համով-հոտով սազ արա՛...

ԳՈՒՍԱՆԸ. — Մեր սարերէն, խո՛ր ձորերէն
Պղտո՛ր-պղտո՛ր կուգաս, Արա՛զ,
Մեր սրտերէն, խո՛ր աչքերէն
Արուն քամեր, կերթա՛ս, Արա՛զ...
Մեր սարերէն, մո՛ւթ ձորերէն
Ոլո՛ր-մոլո՛ր կերթաս, Արա՛զ,
Ա՜յ սարե՛ր, ջան սարե՛ր,
Ալմաստի սարե՛ր...
Քանի հարուր-հարուր տարի
Մեր սրտերէն ելեր, կերթաս.
Մեր դարդերով, մեր ցաւերով
Խոլո՛ր-մոլո՛ր կերթաս, Արա՛զ...
Մեր սարերէն, մութ ձորերէն
Մեր դարդերով կերթա՛ս, Արա՛զ.
Ա՜յ սարե՛ր, Հայ-սարե՛ր,
Ջան անո՛ւշ սարե՛ր...
Ու դարերով, մեր դարդերով
Էս աշխարհի քար-ապառաժ,
Անգութ խղճին միշտ զարնելով՝
Տխուր-տրտում կերթաս, Արա՛զ...
Մեր սարերէն, խոր ձորերէն
Արուն քամեր, կերթա՛ս, Արա՛զ.
Ա՜յ սարե՛ր, ջա՛ն ձորե՛ր,
Ջաւահե՛ր սարե՛ր...
Ա՜խ, աշխարհը անխղճմտանք
Քեզ չէ գթայ, Ազիզ-Արա՛զ,
Քու բողոքին, քու մորմոքին
Չի էլ լսի, արնոտ Արա՛զ...
Մեր սարերէն, մութ ձորերէն
Տխուր-տրտում կերթա՛ս, Արա՛զ.
Ա՜յ սարե՛ր, Հայ ձորե՛ր,
Զմրուխտի սարե՛ր...
Դուն էլ, Արա՛զ, մեր արունով
Էս աշխարհի խղճի վրայ
Դիզի՛ր, դարձի՛ր սև-դառն ծով, —
Թո՛յն ու արո՛ւն, Ազիզ-Արա՛զ...

Մեր սարերէն, մեր ձորերէն
Արուն քամեր, կերթա՛ս, Արա՛զ.
Ա՜յ սարեր, Հայ-սարե՛ր,
Ջա՛ն, անուշ սարե՛ր,
Ալմաստի սարե՛ր...

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ. — Ձէնդ անսպառ, գուսան ախպէր,
Մեր աշխարհի բլբուլն ես խաս.
Ա՜խը՛ր, Գուսան, շա՜տ ենք լացեր,
Հացն ու բարձը աղի թրջեր...
Ո՞ւր է սազդ, ա՛ռ, սրտիդ զա՛րկ,
Կրակ քցէ՛ մեր սրտերը,
Կանանչ յուսով սազ արա՛։

ԳՈՒՍԱՆԸ. — Երբ ես տեսայ մեր աշխարհի
Ցաւն ու դարդը ծովածաւալ՝
Սիրտս խորունկ ձէն տուեց, —
Զարկի սազս ժէռ քարերին,
Հազար փշուր-փշրանք արի.
Ասի — ամո՛թ, շա՜տ ամօթ է
Էդ փէտ-լեզուն իմ ծով սրտին։
Մինչև չ'ըլնի մութ ու գիշեր,
Կարմիր օրը չի շողայ, —
Մինչև չ'լանք արուն-արցունք,
Մեր արևը չի դուրս գայ,
Կարմիր-Զատիկը չի գայ։
Է՜յ, ջա՛ն, հա՛, ջա՜ն...
Հազար սիրտ ունիմ,
Մէնակ մի լեզու.
Լեզուով էլ սիրտը չի բացուի.
Է՜յ, հա՛յ-ախպրտիք,
Ցէ՛ք հրացան —
Սրտիս սերտ սղմեմ.
Մարդ հրացանով շա՜տ լաւ կը խօսի —
Հրեղէն խօսքեր, ամպի ձէներով...
Տեսէ՛ք, վերև, ամպի փէշով
Երեք տեսակ հաւք կանցնի. —
Մէկը ա՜յ կանչեց,
Մէկը վա՜յ կանչեց,
Մէկը հա՜յ կանչեց.
Ու հրացանս էնոնց պարպեցի.
Ա՜յ կանչողը թողեց, փախաւ
Վա՜յ կանչողը զարկաւ, ընկաւ,
Հա՜յ կանչողը Հա՜յ, Հա՜յ կանչեց,
Եկաւ, նստաւ գլխուս վրայ։
Ով Հայ կանչէ, Հային կանչէ,
Թո՛ղ գայ, բազմի գլխուս վրայ...

III

Սիփան սարէն քամին կուգայ,
Սիրտս քամուն բացեր եմ.
Ջա՜ն, սարերի ազատ քամի,
Ես էլ ձեզ պէս ազատ եմ։
Դուրս եմ եկել, քեզ եմ կանչում,
Դուրս եկ, դիւշման, դէմ առ դէմ.
Գիշեր-ցերեկ քեզ եմ փնտռում,
Ես քեզ սրտա՜նց կարօտ եմ։
Բա՛ց, կուրծքդ բա՛ց. կարօտ եմ քեզ.
Ա՛ւ համբուրս վա՛ռ-վառման —
Իմ երկաթէ, ռումբ-համբուրս
Ա՛ռ սրտիդ մէջ, դիւշման ջա՛ն։

Եղինք, հայե՛ր, ոտքի եղինք.
Կռիւ-հարսնիք մեկտեղ երթանք.
Մասիսից մինչև Առնոս, Տաւրոս
Մի մարդու պէս եղինք, կայնինք։
Մեր „Դրօշակն“ ազատ հովում
Բա՛րձր ու հպա՛րտ կը ծփայ.
Մեր „Դրօշակն“ ապրած կենայ —
Մեր սրտերում, մեր վրայ։
Դէպի կուի դաշտ մեր Դրօշի տակ,
Մեր դիւշմի դէմ, մեր պատուի համար.
Ու թէ որ ընկնինք, մեր վա՛ռ արունով
Մեզնից կը սրբենք այս ամօթն իսպառ։
Ու թէ որ ընկնինք, բոցը մեր արնան
Մրրիկ կը դառնայ սերընդի սրտում,
Ու մեր ձեռներէն վար ընկած շղթան
Ամուր կը կապէ գաղան թշնամուն։
Մեր ընկած տեղէն նոր քաջ կը կանգնի.
Կեցցէ՛ մեր մահը, որ կեանք է ծնում.
Մեր գերեզմանը մայրն է նոր կեանքի,
Կեցցէ՛ Սուրբ գործը — Ցեղափոխութիւն։

IV

Դոռգոռալով ամպերն եկան,
Սարն էլ ամպին ձէն կուտայ.
Հայ կտրիճներ թեւառրան,
Հայն էլ հային ձէն կուտայ։
Զա՞ն, ամպերը կռիւ կ'երթան՝
Կայծակէ թուր մէջքերին.
Հայ-արծիւներ կռիւ կ'երթան՝
Սուր-հրացան ձեռքերին։
Հայ կտրիճնե՛ր, հայ-արծիւնե՛ր,
Ուր ո՞ր երթանք, ուր որ լինինք,
Մէջ մութ ամպին, մոլոր ճամպին,
Մեր „Դրօշակը“ մեր գլխին։
Մեր աշխարհի սէրն ու արունք
Մեզ թուր ու թեւ ու թիկունք.
Բարին մեզ հետ, բարո՛վ երթանք,
Դեւ-Սուլթանի վրէն երթանք։
Ուր որ հասնինք, ուր որ երթանք,
Թուրքը փուի մեր ոտաց տակ,
Անապատը աղբուր բղխէ,
Մութ գիշերին շողայ լուսնակ.
Քուրդը փուի մեր ոտաց տակ,
Փակ դռները բացուին արձակ,
Սարը չոքի, գլուխ բանայ,
Ծովը ճղի ու ճամբայ տայ։
Բարին մեզ հետ, բարո՛վ երթանք,
Դեւ-Սուլթանի վրէն երթանք։
Կեցցէ՛, կեցցէ՛ միշտ վեհ կեցցէ՛
Մեր „Դրօշակը“ մեր վրայ.
Մեր „Դրօշակն Ազատութեան“
Բա՛րձր, բա՛րձր միշտ ծփա՛...
Քիչ էլ կանցնի՝ Հայու երկնէն
Արև կ'ելնի. —
Հայու Արևն կանա՞նչ-կարմի՞ր,
Հուրն 'ի հրեղէն,
Այլուն-փայլո՛ւն,
Նոր-Արև՛.
Հայու Արևն
Նշխո՛ւն-շաշխո՛ւն,
Ծին-ծիրանի՛,
Նոր ու նոնի՛,
Վա՛ռ-Արև։
Հայոց Արևին տանք բարո՛վ,
Հազար բա՛րի, հազար բարո՛վ։

V

ԺՈՂՈՎՐԴԻ ՏԱՆՈՒՏԷՐԸ. —

Է՛յ հարս-մօրպէտ *), խաթուն տնտե՛ս,
Գինի ունինք եօթը կարաս,
Եօթը կարսի գինին էլ խաս.
Էն մենձ գաւով գինի բերէք,
Նռան-ալւան գինին բերէք.
Գուսանի հետ, դուռ ու դրկեց,
Հայի հալալ սեղան նստենք։

ԳՈՒՍԱՆԸ. — Հայ-ախպրտի՛ք, հայ-քուրիկնե՛ր,
Գինին արնան նշանն է. —
Գինին խմենք, արուն թափենք
Հայոց ազգի կենացը։
Է՛յ, հարս խաթո՛ւն, ողջ մնաս,
Ծլիս-ծաղկիս, ծառ դառնաս,
Գլխաւորդ ողջ մնայ։
Հայ-ախպրտի՛ք, հայ-քուրիկնե՛ր,
Ձեր օճախը միշտ վառ մնայ,
Ձեր տունն ու դուռ միշտ շէն մնայ.
Եօթը որդով սեղան նստի՛ք,
Եօթը օրօցք միշտ շրխկայ.
Մէկ հիւրն երթայ, երկուսը գայ,
Տեղը դատարկ չ'մնայ.
Ամպարներդ հացով մնան,
Պատուով մնաք, բարձով մնաք.
Քարը բռնէք՝ լա՛լ դառնայ,
Քօլը բռնէք՝ զառ դառնայ.
Գինի խմե՛նք, արուն թափե՛նք,
Հայոց ազգի կենացը։
Գինի խմե՛նք զարկե՛նք, զարկե՛նք,
Հայոց ազգի, կենացը։
Հայոց ազգը ապրած դենայ
Հազար-հազար բարով, տարով.
Հայու „Դրօշակն“ ապրած կենայ,
Հայու արևն ապրած կենայ
Հազա՞ր, հազա՞ր բարով, տարով...

ՀԱՑ-ԳՈՒՍԱՆ

ԱՆՑԱԾ ՕՐԵՐ
ԳԱԼԻՔ ՕՐԵՐ

Ստրուկ էինք։

Շղթան մեր պարանոցին, թուքը երեսներիս, մէջքը ծռած, լուռ՝ ինչպէս հավը. աչքերը բռնաւորի սուրին յառած։

Ստրուկ դաշտի վրայ, ուր անիսս եզը աւելի երջանիկ

*) „Մօրպէտ“-ը տանտիրուհուն օգնող ջահիլ հարսները։

էր քան նրա մարդակերպ տէրը. տան մէջ՝ ուր իշխողի անարգ հաճոյքը սաւառնում էր ամուսնական առագաստին՝ ինչպէս հարեմական անողոք օրէնք. եկեղեցում՝ ուր անհուն վշտերի մրմունջը լոյս աշխարհ չէր տեսնում, դատապարտուած մշտական երկիւղի, երկիւղ մարդկային բռնութեան առաջ, երկիւղ նոյնիսկ Աստծոյ առաջ...

Ստրուկ կրակապաշտ Պարսկի առաջ, որ չներեց Հային նրա թռիչքը դէպի Սիրոյ քարոզիչը, ստրուկ Արաբի առաջ, որ գրոհ տուեց դէպի հայկական բարձրավանտակը՝ Մահմեդի աղաղակը սրով և կրակով տարածելու, ստրուկ սուլթանների արիւնաներկ գահի առաջ, որ մարմնացումն էր պատմութեան դարևոր չարիքների, ստրուկ նոյնիսկ գայմագամի, միւդիրի, չավուշի առաջ...

Դա մեր անցեալն է։

—

Ահա սկսւում է և ներկան։

Արևմուտքից՝ փշրուող շղթաների ձայներ հասան։ Մահմեդականութեան սահմանների վրայ ընկճուած ուժը, „յանուն քրիստոնէութեան", գլուխ բարձրացրեց։ Ստրկութեան խորաքուն հօտը — յոյն, սերբ, կրետացի, բուլգար, մակէդոնացի, հայ — տրորեց աչքերը...

„Հայեր.

„Հասնում է ժամը Արարատեան երկրի և հայ ժողովրդի ազատութեան, հասնում է ժամը՝ երբ նախաթոռ Էջմիածինը պիտի վերականգնէ իր նախկին անկախութիւնը։ Ոտի կանգնեցէք, ապստամբեցէք, քաջարի հայե՛ր, թօթափեցէք պարսկական լուծը, ցնծացրէք ալեզարդ Մասիսը. արեամբ ողողեցէք մայրենի երկիրը և ապա ապրեցէք ընդմիշտ ազատ և անկախ։

„Ժամ է, ժամանակ...

„Առաջ. կամ այժմ, կամ երբէք"...

Այս խօսքերը հնչեցին 1826-ին։ Եօթանասուն և հինգ տարի է անցել այն յիշատակելի օրերից, երբ այդ կոչի հեղինակը, երկաթէ-վեղարաւորը, Ներսէս Աշտարակեցին, պատանեկական հաւատով դիմեց մրափած հայութեան, վստահ քրիստոնեայ կայսրների խոստումներին։ Աւա՜ղ, քիչ յետոյ, երբ „ապստամբութեան" շրջանին հետևեց „աղերսանքի" շրջանը, Արարատեան հերոսը՝ քամեց դառնութեան բաժակը, յուսախաբ ուխտադրուժ դաշնակիցներից...

Անցաւ ուղիղ կէս դար։ „Քրիստոնեաների ազատութեան" անունով կռիւ մղող հիւսիսը նորից նետուեց կուի դաշտը, բայց այս անգամ ոչ Արարատի վրայ, Մայր-Արաքսի ափերում, այլ դէնը, ուր անյիշատակելի ժամանակներից արդէն տիրում էր անապատը, իբրև անբաժան ընկեր սուլթանների թագաւորութեան։ Ռուս-պարսկական պատերազմը փոխուեց ռուս-թիւրքական պատերազմի։ Ներսէս Աշտարակեցու տեղ հանդէս եկաւ Ներսէս Վարժապետեան, — դարձեալ վեղարաւորը, աղերսանքի դասակարգի ներկայացուցիչը։

Եւ այն փոթորկալից օրերին, երբ թշնամի բանակները՝ մինը յանուն քրիստոնէութեան, միւսը յանուն մահմեդականութեան՝ և երկուսն էլ յանուն միապետութեան՝ արեան գետեր էին թափում երբեմնի խաղաղ աշխատանքի ձորերում, հայկական տարրը գլուխ չբարձրացրեց, ոտի չկանգնեց՝ հարուած տալու թշնամու սրտին, մնաց „հաւատարիմ հպատակ", ենթարկուեց հանգստութեան օրօրներին, և կուի դրօշակին նորից փոխարինեց աղերսանքի հին երգը, — աղերսանք Եւրոպային, ուղղած Բերլին, աղերսանք Թիւրքիային, ուղղած Եկեղեցի-Քէօսքին, աղերսանք դեսպաններին, կատարուած գիշերային մթութեան մէջ, անկատ ճանապարհներով...

Եւ խաբուած աղերսանքի սին արդիւնքներից, Ներսէս Վարժապետեան 1878 թուի օգոստոսի 2-ին Ազգային ժողովում՝ այս խօսքերով աւետեց նոր շրջանը.

„Գնա՛նք Հայաստա՛ն.

„Այնտեղ ուղարկենք մեր ընդունակ, կրթուած և անգանուէր հոգևորականութիւնը. խումբ-խումբ այնտեղ թո՛ղ երթան ուսուցիչները, այս ոգևորուած երիտասարդութիւնը, մեր արհեստաւորներ, առևտրականները. թո՛ղ այնտեղ վերադառնան այն բոլոր դժբախտները, որոնց խլեց ընտանեկան օջախից վիշտն ու հալածանքը։ Հայաստանում այլևս պիտի դադրեն հալածանքն, սովը ու ժանտախտը. այլևս չի լինի բռնութիւն՝ գոյքի և կեանքի դէմ։ Վե՜րջ բռնութեան։

„Սրանից յետոյ Հայաստանը կունենայ իր ճանապարհները, իր ջրանցքները. գործարանները կը բազմանան և անգլիական դրամագլուխները այնտեղ գործադրութիւն կը գտնեն. թո՛ղ ուրեմն մեր դրամատէրերն էլ այնտեղ գնան և այժմեանից միանան ու ընկերակցութիւններ կազմեն։

„Միանանք և մենք, ու միահամուռ ուժերով դըպրոցներ բանանք ամէն մի քաղաքում. միանանք, որ լայնացնենք մեր առևտուրն, զարգացնենք մեր արդիւնաբերութիւնը։ Եւ թո՛ղ բոլոր հայերը՝ Հնդկաստանի, Հայաստանի, Անգլիայի, Թիւրքիայի, Ռուսաստանի, Աւստրիայի և Պարսկաստանի՝ միմիանց ձեռք մեկնեն ու միանան՝ առաջադիմութեան այս գործի համար"։

Որպիսի՜ յուսախաբութիւն... Եւ որքա՜ն երջանիկ էր այդ խօսքերի հեղինակը, որ չտեսաւ 95-96 թուերի դժբախտ Հայաստանը։

Դա երէկ էր։

Եւ դեռ երէկ մենք աղերսողներ էինք։

—

Ահա և 90-ական թուականները, հայկական քաղաքական ստրկութեան սահմանագիծը՝ դրոշմուած մահաշունչ բանտերով,—ո՜հ, ազատութեան քանի՞ քանի՞ կարապետներ կուլ գնացին այնտեղ, — մռայլատես կախաղաններով, որոնց բարձրութիւնից առաջին անգամ „հայ հպատակների" բերանով դղրդաց սուլթանական երկրին անծանօթ „կեցցէ ազատութիւն" խօսքը, կուի արիւնաշաղախ դաշտերով, ծաղիկների փոխարէն մարդկային դիակներով զարդարուած...

Բողոքի նշանները էին դրանք, երբեմն երկչոտ, պաղատական, հեռու սոսկում պատճառելու հսկայականութիւնից, բայց երբեմն էլ կատաղի, ինչպէս հեղեղ, ազգու ինչպէս շանթը։ — Ահա Սասուն իր կտրիճներով, Այգեստան իր նահատակներով, Զէյթուն իր ապստամբներով, ահա Էրզրում, Գում-Գափու, ահա ցոյցերի շարքը Կ. Պոլսի Թաղերում, Բանկում, ահա Խանասոր, ահա ժողովրդական հերոսը Տարօնի սար ու ձորերի մէջ, երգւած գեղջկական տաղերում...

Այլևս աղերսանք չէր դա յանուն ոտնակոխ արդարութեան, յանուն ստրուկ ժողովրդի, այլ բողոք, պահանջ, բղխած երկրի ծոցից, սրբագործւած ժողովրդի որդոց արիւնով։

Մենք այլևս աղերսողներ չենք։

Այսօր մենք բողոքողներ ենք։

—

Ահա և վաղը։

Ի՞նչ պիտի լինի այդ վաղը, որ նախադուռն է նոր տարւայ, նոր շրջանի, նոյնիսկ նոր դարու։ Արդեօք յոյսերի բեկանումն, անվերջ տանջանքների և անկարագրելի վշտերի մի անզօր դադար, թէ՞ օրհասական կռւի մի նոր գրոհ, լքցւած վրէժով և շեշտւած ապագայի դիւթիչ հեռանկարով։ Լռութի՞ւն թէ շարժում։ Աղերսա՞նք թէ հարւած։ Դադա՞ր թէ կռիւ...

Ահա խորհուրդը մեր կեանքի։

Դարերի երկար շարքը ապրուստ չէր հայութեան համար, այլ տանջանք։ Իսկ նրա վերածնութեան 50-ամեայ պատմութիւնը, գրկախառնւած համարձակ բողոքի տասնամեայ պատմութեանը՝ շատ քիչ ժպտաց հային. դիակ, արիւն, երկպառակութիւններ ներքին, դաւեր արտաքին, դարձեալ դիակ, դարձեալ արիւն— ահա նրա բաժինը, ահա նրա տեսած-վայելածը...

Սակայն դժւարը անցանք։ Ցամառ, յուսահատ, մաշող աշխատանքով ստրուկը բողոքող դարձրինք, սովորեցրինք շղթայակապ ճորտին համարձակ նայել բռնաւորի աչքերին, սովորեցրինք նրան ատել իր շղթան, իր անկումը, իր ստրկութիւնը։

Դարևոր մոխրակոյտի տակ մարող կրակը ազատեցինք վերջնական հանգումից։ Սառնամանիքի վտանգը անցաւ։ Մոխրակոյտի տեղ այժմ բորբոքւած կայծեր ունենք։ Միթէ՞ անհերևակայելի է հրդեհը... Ոչ և ոչ։ Մի քանի համարձակ խառնոց, ընդհանուր մի ճիգ, համազգային մի գրոհ, — և ահա համաճարակ հրդեհը պատրաստ է. թշնամին շատ է չոր, նա շուտ կը վառւի. դրսի քամին շատ է զօրեղ, նա շուտ կը բորբոքի...

Կայծենք ուրեմն...

—

Կայծենք։

Դրա մէջն է թէ՛ ժամանակակիցների և թէ՛ ապագայ հայ սերունդների ազատ, խաղաղ, մարդավայել կեանքը։ Այժմեան մեր վհատութիւնը ապագայ ստրկութեան մայրն է։ Արդի զինադադարը՝ գալիք օրերի ծաղրը, պատմութեան անողոք դատը, անջնջելի արատը։

Գալիք օրե՞ր։

Ահա ո՞ւր է արդի հայութեան յափշտակութեան մեծ հնոցը, նրա սրտի յոյզերի գլխաւոր նշանակէտը, ոգևորութեան կենդանարար աղբիւրը։

Ցոգնած անցեալի տխուր էջերից, երբ ստրկութիւնը կազմում էր երկրի միակ պատկերը, վհատած ներկայ օրերի դառն տեսարաններից, օրեր, երբ արտասուքը, հեծեծանքը, արիւնը, մահը և բռնութիւնը արթնացող ժողովրդի միակ բաժինը եղան, յուսախափ գեղեցիկ երազների անլուր հետևանքներից, դարձնենք մեր աչքերը դէպի ապագան, դէպի գալիք օրերը։

Արդեօք գալիք տասնամեակը դարձեալ ստրկութեան, շղթաների, հալածանքի տասնամեակը պիտի լինի, թէ խորհրդաւոր վերջաբան անցած տանջանքների, վճռական վերջակէտ դարևոր ստրկութեան։ Եւ դեռ չբոլորած եկող տասնամեակը, կը տեսնե՞նք արդեօք այնտեղ՝ բռնութեան երկրի մէջ, ազատութեան յաղթանակը, մեր վշտերի, մեր արիւնոտ կռւի, յուսահատ պայքարի ցանկալի վախճանը...

Ե՞րբ կը լինի այդ։

Արդեօք 1903-ին, 1906-ին, թէ 1908-ին։ Առանց մարգարէական հնագարեան կոչման ով կարող է ասել այդ։ Սակայն կայ մի նախազգացում, — խորը, անսահման, ոգևորող հաւատ, որ շատ անգամ փրկեց տանջւող ազգերին օրհասական մոմենտներից և որը նախազգալ, գուշակել է տալիս մեր տանջանքների վախճանը՝ եկող տասնամեակի վախճանի հետ միասին։ Համարձակ է գուցէ այդ հաւատը, վերացական, բայց նա կայ, գոյութիւն ունի և թող օրհնւած լինի այդ մխիթարիչ, յուսատու հաւատը...

Իսկ աւելի հեռո՞ւն...

Ահա արիւնը դադարած. շինականը իր աշխատանքի տէր, ուսուցչի բերանը բացւած. ազատ խօսքը իր բարձրութեան վրայ։ Ոչ կռիւ ազգերի մէջ, ոչ կրօնի մրցում և ոչ էլ մտքի հալածանք։ Մի կռիւ միայն կայ—կռիւ պրոգրէսի համար. մի մրցում միայն — մրցում աշխատանքի համար. մի հալածանք միայն — հալածանք բռնութեան դէմ։

Եւ ապագայ երջանիկ օրերին, երբ նորագոյն սերունդները՝ ձեռք ձեռքի տւած կը մղեն արեան և արտասուքի այժմեան հայրենիքը դէպի բարձր մտքերի իրականացման ուղին, երբ հայը, թիւրքը, քիւրդը, ասորին, յոյնը, արաբը՝ միացած ընդհանուր հայրենիքի ֆեդերացիական շաղկապով, նախկին թշնամութեան և ատելութեան աւերակների վրայ կը կառուցանեն նոր, ազատ, համերաշխ կեանքի հաստատ սիւները, մենք կը կազմենք ստրուկ ազգերի ամենամեծ և ամենագրաւիչ հանդէսը — ազատութեան տօնը, իբրև վերջ-

նական մոռացում համազգային դարևոր վշտերի, իբրև անշարժ գերեզմանաքար ստրկութեան, ազգերի փոխադարձ ատելութեան, իբրև վերջնական հրաժարական այն բոլորից, ինչ որ արիւնոտ է, հին և ստրկական...

Ազատութեան տօ՛ն...

Պատրաստուենք այդ տօնին, և յանուն այդ մեծ յաղթանակի, չփախչենք մեծ զոհերից, կանգ չ՚առնենք մեծ կորուստների առաջ։ Առանց մեծ զոհաբերութեան մեծ արդիւնք չկայ։ Ստրուկ ազգերի մէջ ազատութեան ծիլը առաւօտեան ցօղերով չի աճում, այլ արեան շիթերով։ Անշարժութեան ժանգը չէ, որ կրծում է ստրուկի շղթան, այլ արիւնը, կուի և յաղթանակի առատ արիւնը...

Եւ ազատութեան այն երջանիկ օրերին՝ մենք արձաններ չենք կանգնեցնի և ոչ էլ շքեղ յիշատակարաններ՝ յանուն խորհրդաւոր յաղթանակների։ Բիբլիական գեղեցկութեան հայրենիքի մէջ, ինքը՝ ազատ, սիրուն բնութիւնը կ՚երգէ այդ ազատութիւնը։ Եւ երբ արեան երկրի մէջ կը հնչի առաջին ազատ խօսքը՝ ընդդէմ բռնութեան, երբ գիտութեան և սոցիալական նորագոյն գաղափարները ճանապարհ կը գտնեն այն անկիւններում, ուր մինչև այժմ տիրել է միայն կամայականութիւնը, խաւարը և սուրը — դա կը լինի ամենամեծ արձանը այն դժբախտ, բայց անմոռանալի զոհերի, որոնց արիւնով ներկուեց Սասուն, Այգեստան, Տարօն և Ստամբուլ...

Մի արձան միայն կը կանգնեցնենք բռնութեան կենտրոնում, միակը իր տեսակի մէջ, նորագոյն Արևելքի պատմութեան էջերում, նոյն այն տեղում, ուր այժմ հպարտ գլուխ է բարձրացրել Եըլդըզ-Քէօսք, սուգի և արեան այդ մռայլ բունը. կ՚ոչնչացնենք արեամբ շաղախուած այդ զազիր շէնքը, գետնին կը հաւասարեցնենք կոտորածների հեղինակի անմատչելի դղեակը և նրա տեղ կը կանգնեցնենք սև արձան, այլանդակ ինչպէս Համիդի դժոխային դէմքը, շղթայակապ պատուանդանից մինչև ծայրը, զարդարուած բռնութեան բոլոր զինանշաններով։

Դա կը լինի շղթայակապ բռնութիւնը։

Ոչ մի արձանագրութիւն, ոչ մի խօսք, ոչ մի էմբլէմ։ Եւ հազարաւոր այցելուները, որոնք Արևելքից և Արևմուտքից կը գան դէպի բիւզանդական հին քաղաքակրթութեան նոր որրանը, վայելելու ստրուկ ազգերի ազատ սերունդների աշխատանքի պտուղները, այնտեղ, այդ սև-արձանի դիմաց ուրիշ բան չեն գտնի, բայց եթէ այս մակագիրը՝

ԱՑՍՏԵՂ ԹԱՂԻԱԾ Է ԲՌՆՈՒԹԻՒՆԸ։

Դա կը լինի մեր անցած տանջանքների վարձը։

Դա կը լինի մեր ապագայի պարծանքը։

ՎԵՐՋԻՆ ԺՊԻՏԸ

Բանքումն ենք արդէն։ Ժամը մօտաւորապէս $1\frac{1}{2}$-ը։ Դուռը կիսաբաց։ Դռան ճիշդ դիմացը, սանտուխին վրայ կանգնած կրակում ենք՝ մշեցի Միսակը, Ռուբէնը, Մխիթարն ու ես մէկ կողմէն, և մի երեք ուրիշ ընկերներ միւս կողմէն։ Ատրճանակներուն ծուխը արդէն բռնած է սրահը. գոնէն դուրս ոչինչ կ՚երևայ. հրացաններու անընդհատ որոտումն է միայն, որ մեզ կիմացնէ թէ դռան դիմաց մեծ թիւով զինուորներ կան։

Ցանկարծ մի սոսկալի պայթում կը լսենք մեր ետևից. կը դառնանք՝ ինչ տեսնենք՝ մեր ընկերներէն մէկը յօշոտուած և անշունչ գետինը փռուած, իրմէն երկու քայլ հեռուն ուրիշ երկուքը՝ ոտքերնին փշրուած պառկած։ Ռումբի մը պայթումն էր։ Ամբողջ շէնքը սարսռաց։ Բայց չգիտեմ ինչպէս, դռանը դիմաց գտնուող մեր չորսէն, միայն Ռուբէնը մի քանի անվնաս փշրանքներ ստացաւ գլխուն ու մէջքին։ Դառնալով ընկերներուն. „Տղերք ձեզ մատաղ, ով որ վրան ռումբ ունի թող գնէ անկիւնի սեղանին վրայ“. ըսելս ու Միսակին հեռանալը մէկ եղաւ։ Հազիւ մենք նորից դէպի դուռը դարձանք. նորից մի ահռելի պայթում։ Այս անգամ զոհը մէկ հոգի էր, մշեցի Միսակն էր դա։ Գոտիէն ռումբը հանած սեղանին վրայ դնելուն ոտքէն կը վիրաւորուի ու բաց կը թողու ռումբը։ Տեսարանը սոսկալի էր. աջ ձեռքը մինչև արմունկը մէկ կողմ շփրտուած. ձախ թևը պզիկ-պզիկ եղած, բայց դեռ մի քանի մկաններով կախուած ուսէն, դէմքը արիւնլայ, զգեստները պատռտուած, փռուած է քարերուն վրայ։ Նրա մօտիկ ընկեր Մխիթարը հազիւ ժամանակ ունեցաւ „վա՛խ, Միսակ ջան“ ըսելու։ Դրսէն՝ „Օլա՛ն, իչէրիէ, օլա՛ն իչէրիէ“ ձայները լսեցին և ծուխին միջէն սուիններու ծայրեր սկսան փայլել։

„Տղե՛րք, ձեզ մատաղ, դէպի դուռը“։

Վեց-եօթը ատրճանակի միանգամից թափած գնդակները բաւական հեռացուցին սուիներու ծայրերը։

„Մխիթա՛ր, դէպի պատուհանը“։ — Հինգ ռումբի յանկարծակի պայթումը մի առ ժամանակ մաքրեց փողոցը։

Մինչ Մխիթարն ու ես նոր ռումբեր առած կը դառնայինք դէպի պատուհան, Միսակը ծունկերուն վրայ չոքած ցցուեցաւ մեր առաջ իր ահռելի տեսքով.—„պարոն ջան, քեզ զուրպան, մէկ սուրլուն էստեղիս“ ըսաւ ու վիզը ծուռ աջ թևի մնացորդը դէպի կուրծքը շարժեց։ Ամբողջ էութեամբս դող եկայ. որոշ չեմ կարող ըսել թէ ինչ կըզգայի այն միջոցին, միայն սա կը յիշեմ, որ ատրճանակիս փայտեայ մասը բերանս տարի և բոլոր ուժովս խածնելով զայն երեսս դարձուցի իրմէն։ Նորից դիմացս եկաւ իր արիւնլայ ոտքը սալայատակին վրայ քարշ ածելով։ Կրկնեց իր խնդիրքը, այս անգամ աւելի կտրտող մի շեշտով։ Իր տեսքը, իր նայուածքը և վերջապէս իր ձայնը ինձ ընկճեցին բոլորովին։ Մերժելն անգթութիւն էր. նրա համար ամէն մի բոպէն ահռելի տանջանքներ էին. պէտք էր ազատել մեր խեղճ ընկերը.— այս ամէնը մի ակնթարթում անցան մտքովս, բայց չգիտեմ ինչո՞ւ ես ուղղակի իմ ատրճանակը չպարպեցի իր չարչարուող կուրծքին ու դառնալով Մխիթարին. „Մխիթա՛ր, մեղք է տղան, ազատէ՛“։ Այս խօսքերս Միսակը լսեց և անմիջապէս իր արիւնոտ դէմքը դարձուց անոր ըսելով. „Մխիթար ջան, քեզ մատաղ, մէկ խուշուն“։ Մխիթարը բոլորովին դեղնած, դողացող ձեռքով ուղղեց ատրճանակը դէպի անոր կուրծքը։ „Ա՜խ, հոգուդ մատաղ“, բացականչեց Միսակը և գոհութեան նշոյլը երեսին իր յօշոտուած թևերը դէպ յետ պարզեց, կարծես իր ընկերոջ գործը դիւրացնելու համար։ Աչքերը արցունքով լեցուն Մխիթարն ինձ նայեց. „չէ՛

չեմ կրնար“. ու դառնալով Միսակին մի լալկան ձայնով. „Միսակ ջան, գնա այն երկրորդ պատուհանին առաջ կեցիր և շուտով զինուորներու գնդակներէն մէկը քեզ կ'առնէ“։

Այդպէս էլ եղաւ։ Մի քանի րոպէ վերջը Միսակը չոքած էր պատուհանին առաջ, գլուխն ու կուրծքին մէկ մասը դէպի դուրս ցցած։ „Օլան ատամնընեզ պանա վուրուն“. կը կանչէր նա բարձր ձայնով ու մի շարք հայհոյանքներ կը տեղան զինուորներու հասցէին, Մի քառորդ ժամ անցաւ այդպէս և հակառակ Միսակի ցանկութեանը իր մօտէն անցնող հարիւրաւոր գնդակներէն և ոչ մին իրեն առաւ։

Ցանկարծ նա դադարեց կանչելուց ու դառնալով դէպի մեզ. „Տղե՛րք պատրաստ, վերէն բաշիբուզուկ կուգայ“։ — Երկու երկու հոգի բռնեցինք պատուհանները։ Երբ խուժանը գոռում-գոչււմով յարձակեցաւ դռան վրայ, առաջին յարկէն մենք վեց հոգով. իսկ տանիքէն Հրաչը իր չորս ընկերներովը ռումբերու մի տարափ տեղացինք դէպի վար։ — Այդքան թւով ռումբերու միաժամանակ պայթումը, վիրաւորներու սիրտ պատառող վայնասունը, դիմացի շէնքերէն թափուող ապակիներուն շառաչը և այս բոլորի հետ միաժամանակ դէպ երկինք բարձրացող դինամիտի կապոյտ ծուխը մի րոպէ ինձ սառսռեցուցին... մարդկային կեանքի հետ էր գործերնիս... ո՞վ տուեց մեզ այս իրաւունքը... բայց ինչո՞ւ նոքա սկսան... ովքե՞ր էին մի քանի ամիսներ առաջ արեան գետեր հոսեցնողները... սոքա չէի՞ն... Այսպէս մի շարք անկապ մտքեր մի քանի վայրկեան գամեցին ինձ պատուհանի առաջ. գլուխս դուրս հանեցի փողոցը նայելու. — մուխը մասամբ նօսրացած էր արդէն. ցիր ու ցան ընկած դիակներ դռան առաջը. իսկ խուժանի մնացած մասը սարսափահար կը փախչի դէպի Թէփէ Բաշի։ Մի բոպէական սարսափի լռութեան մէջ Միսակին ձայնը կը հասնի ականջիս. կը դառնամ դէպի աջ. պատուհանէն նորէն դուրս կախուած իր բզկտուած, արիւնոտ թեւերը լաթի պէս թափ տալով դէպի փախչող խուժանը մի ահռելի ժպիտ երեսին. „Սիզի քիտի ալչաքլար“... կը պղաւէ իր արդէն կիսամեռ ու խռպոտած ձայնով։

Ա՜խ, անոր այն ժպիտը...

Եթէ մի օր. մի ժամանակ վիճակուի մեր թշուառ հայ ժողովրդին, իր այս գոյութեան կռուին մէջ մեռնել, անհետանալ երկրագնդիս երեսէն առանց մշեցի Միսակին այն վերջին ժպտին... հազար ափսոս պիտի ըսեմ նրա թափած արեանը։

ԱՐՄԷՆ ԳԱՐՕ

ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌՋԵԻ

Տա՜սը տարի, բայց մեծ թիւ մը չէ ատ, սովորական շրջան մը հանրային մարմիններու կեանքին մէջ։ Միացեալ Ընկերութիւն մը, օրինակ, կրնար իր քսանհինգամեակը տօնել քանի մը տարիէն, եթէ սուլթանի մը արիւնոտ կռուփը չ'իջնէր անոր գլխուն։

Որքա՜ն մեծ է սակայն զանազանութիւնը այդ երկու կարգի յոբելեաններու միջև — յեղափոխական մարմնի մը և դպրոցական-գրական հաստատութեան մը յոբելեաններուն։

Ամբողջ դարու մը վերածնութեան ճիգերէն ետք, դպրոցական անթիւ ու վաղանցուկ ընկերութիւններու աւերակներուն վրան էր որ կը բարձրանար Միացեալը։

Վարժապետեան մը և Արծրունի մը իրենց ամբողջ ժողովրդականութիւնը դրին այդ հսկայ գործին իբր հիմնաքար. ժամանակակից երիտասարդութիւնը՝ իր բոլոր եռանդն ու ձեռնհասութիւնը։ Մինչև մեծ-եպարքոսներ ու դեսպաններ չզլացան իրենց հովանաւորութիւնը անոր, մինչև փափկասուն տիկիններ չվարանեցան զոհել իրենց արգուզարդի ժամերը՝ Միացեալին օժանդակելու։ Օրեան ժամն էր ան։

Պատրիարքական իշխանութիւն, հարուստներու ձեռնտուութիւն, ամբողջ հայ ժողովրդի համակրանքը Կովկասէն մինչև Եւրոպա — ահա՛ նեցուկները Միացեալին։

Եւ սակայն այդ գերազանցապէս համակրելի գործը այսօր փլած է արդէն...

Իսկ հիմա յիշեցէք յեղափոխական կազմակերպութեան առաջին դողդոջ քայլերը տա՜սը տարի առաջ։

„Ծանրգլուխ հայրենասէրներու“ աչքին՝ տաքգլուխներու գործ մըն էր ատ, պատանիներու յափշտակութիւն մը, խենթութիւն մը վերջապէս, որ դատապարտուած էր անհետ կորսուելու քանի մը տարիէն, երբ այդ „տղաքը“ „մարդ“ դառնային, երբ վերջապէս ընչուէր „մոլիներու“ այդ խմբակը...

Ու տեսա՜նք... Տարիները եկան ու գացին, գլորեցաւ տասնեակ մըն ալ ահա։ Ահաւոր, անպատում աղէտներ եկան անցան այդ բուռ մը քաջերուն վրայէն։ Որքան մատղաշ, յուսատու հոգիներ, մաքուր ու վսեմ սրտեր փշրուեցան դէպքերու անողոք անիւին տակ։

Բայց... բայց սերունդը անհետ չեղաւ. կայծակը ճիւղերը միայն կոտրտած էր. արմատը խորո՜ւնկ էր։ Ընձիւղները բազմապատիկ սկսան ծլիլ հոն իսկ, ուր ծովածաւալ արիւնի կոհակներուն մէջ խեղդուած, ոչընչացուած կը կարծուէին գաղափարին սաղմերը...

Եւ լայնցաւ յեղափոխական շարժումը, Խաստուբէն մինչև Զէյթուն, Պոլիսէն մինչև Խանասոր, լայնցաւ անդուլ, անդադրում, յամառ, ու 19-րդ դարուն վերջին օրերը, Զարդերէն հինգ տարի ետք, տիրապետող ուղղութիւնը դարձաւ հայ մտաւորականութեան։

Հայ մտաւորականութեան, ըսի, այլ ո՛չ հայկամ-քին։

Նկարագիրը, այն զօրեղ կամքը, որ մինչև անձնիրութեան կը հասնի արդար գաղափարի մը յաղթանակը հետապնդելու — հազագիւտ երևոյթ մը ստրուկ ցեղերու համար — մեր մէջ ալ փոքրամասնութեան մը բաժինն եղաւ։ Յեղափոխական մակդիրի շուայլ բաշխումին հակառակ, Մատեան գունդ մը միայն զատուեցաւ 3 միլիոն ստրուկներէն, գաղափարի կռիւը արիւնով սրբագործելու։ Ատկէ աւելին չէր սպասուեր արդէն։

Քանի՞ քանիներ, որոնք տարիներ առաջ յեղափոխութեան ախոյեանները, ռահվիրաները կը կարծէին ըլլալ, այսօր ո՛չ միայն ետի շարքերը քշուած են, այլ մինչև իսկ դուրս նետուած այդ Մատեան գունդէն։ Ժամանակին հետ չքալողներն են ասոնք։

Եւ սակայն հակառակ արիւնի-վախին, անոր շարքերը բազմանալու վրայ են այսօր. ո՛չ միայն ատ, այլ ինչ

որ ամենէն աւելի նշանակալից է — յեղափոխական գաղափարը խորունկնալ կըսկսի հիմա, լայնալուն հետ համահաւասար։ Կղերական-Հայրենասիրական կճեպը թափելու վրայ է արդի երիտասարդութեան ուղեղին վրայէն. հորիզոնը կ'ընդլայնի տակաւ անոր աչքին առջև, ցուցնելու հեռանկարը ժողովրդային շահերու վերջնական յաղթանակին։

Եւ այսպէս յարաճուն կը կազմի Յեղափոխութեան գործօն ուժը, որ եթէ այսօր արհամարհելի քանակ մը չէ, վաղը վեթխարի մարմին մը կրնայ ըլլալ անվրէպ։

Այդ ուժը չունեցաւ ո՛չ պատրիարքներու, ո՛չ հարուստներու, ո՛չ ուրեմն „ջոջ" դասակարգի մը աջակցութիւնը։ Պատրիարքները նզովեցին ան եկեղեցիներու բեմէն, մեծատունները գարշանքով երեսնին դարձուցին, տիկինները սոսկացին անկէ, վատոգի գրագէտներ ծաղրեցին ան, դաւաճաններու խայտաբղէտ վոհմակ մը, խաչէն մինչև գրիչ գործածողները... անողորմաբար դաւեցին անոր, բռնակալներ հալածեցին ան, — բայց ան մնաց անսասան իր հիմերուն վրայ, փշրեց իր ոտքերուն տակ բոլոր այդ սողունները և մտաւ 20-րդ դարը՝ վստահ իր առաքելութեանը։

Գործունէութեան դաւադրական հանգամանքը, որ քայքայումին միջոցը եղած է բոլոր գաղտնի մարմիններուն, անզօր գտնուեցաւ Հայ յեղափոխութեան ամենէն կենսունակ արտայայտութեան՝ Հ. Յ. Դաշնակցութեան հիւսուածքներուն դէմ։ Առողջ սկզբունքներու հետ, ապահովրդեն սիստէմի կիրառութիւնը առաջին օրէն հզօր ապանեխիչը եղաւ Դաշնակցութեան շարքերուն։

Եւ ահա՝ տասը տարուան մրրկայոյզ, դժնդակ գործունէութենէ մը ետք, կանգուն կը մնայ նորէն այդ մարմինը, որովհետև մէկ նպատակ մը միայն ունեցաւ — ժողովրդին շահը, մէկ հեղինակութիւն մը միայն ճանչցաւ — իր խիղճը։

Քանի՜ քանի հաստատութիւններ, „ազգային" կոչուած — պատրիարքական թէ կաթողիկոսական իշխանութիւն, եկեղեցի և ն — խարխլած են այսօր և կորսընցուցած համազգային նշանակութիւնին։ Այդ համայնաւերին մէջ մէկ մարմին մը միայն կը մնայ կենդանի ու գործօն. իրապէս համազգային յեղափոխական կազմակերպութիւնն է ան։

Անո՛ր է Ապագան։

Կը յիշէ՞ք այն աւանդական պատկերը, Հայաստանի Ոգին, ուր դարերու յուշաբեկորներ թաւալգլորը ինկած են Երասխի ափերով։ Հեռանկարին մէջ ալեոր Մասիսի գլխուն ետև՝ վեհապանծ արև մը կըսկսի ծայր տալ, յոյսի, կեանքի, ապագայի իբր խորհրդանշան։ Կը յիշէ՞ք։ Յեղափոխութեան արևն է ան։

Կը բարձրանայ ան կամաց-կամաց։ Անոր տակաւ նշոյլները կը փոխեն տակաւ հզօր ճառագայթներու, որոնք պիտի թափ անցնին, մխրճին հինաւուրց աւերներուն մինչև խորը, պիտի վանեն հոնկէ դարերու մգլոտութիւնը, և նոր կեանք մը պիտի բերեն փչեն Հայութեան մեռելաստանին։

Ահա թէ ինչո՞ւ կանգ առնել ստիպուած ենք 20-րդ դարուն սեմին վրայ՝ Դաշնակցութեան տասնամեակին առջև։

ՎԱՐ. ՎԱՀԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ „ԿԱՐՄԻՐ ԽԱՉ"

(„ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՏԱՍՆԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

—

Հայ յեղափոխական շարժման տխուր անցեալի մէջ մաքով խորասուզելիս, մեր աչքի առջևն են գալիս ընկած նահատակների ուրուականների հետ միասին՝ կենդանի նահատակների դժբախտ շարքերը։

Յեղափոխական փոթորկալից կեանքի մէջ շատ քչերն են յաջողում յարատևել։ Շատերը մեր հին գործիչներից, մեր զինուորներից, եթէ միայն չեն սպանուել կամ մեռել, այսօր կամ առաջում են բանտերի խորքերում, կամ գեգերում են Տաճկաստանից դուրս՝ ցամաք հացի կարօտ։

Երկար տարիների ընթացքում հայ յեղափոխականը կռուել է պատմութեան մէջ բայառիկ անձնուիրութեամբ. այդ երկար տարիների ընթացքում անագին ուժեր են խորտակուել ու ցրուել. ստեղծուել է մի մեծ բանակ բանտարկեալների, աքսորեալների, անկարների, հաշմանդամների, ու ժամանակներ, որոնց վրայ աւելանում են նաև ժամանակաւորապէս դադար առած զինուորները։ Եւ այդ երկար տարիների ընթացքում հայ հասարակութիւնը, նրա ունեւոր դասը, իր ստրկային բթացած զգայութիւններով՝ անտարբեր հանդիսատես է եղել յեղափոխական զոհերի կրած բոլոր տանջանքներին. նա նոյն իսկ մարդասիրական տեսակէտից ոչ մի դրական, յաբատեւ միջոց չի ձեռք առել նրանց ողբալի վիճակը քիչ թէ շատ թեթևցնելու համար։

Երբ մենք լսում ենք, թէ ինչ փառաւոր ընդունելութիւն են գտնում կուիս վերադարձած զինուորները Եւրոպայում, նոյնիսկ Ռուսաստանում, թէ ինչ հացկերոյթներ են տրուում Տրանսվալից եկած անգլիացի կամաւորներին եւ ինչ միջոցներ են ձեռք առնում նրանց ապագան ապահովելու, — ակամայ մեր մտքի՝ առջևն են գալիս գործից վերադարձած հայ կամաւորները՝ քարքրոտ երկար ճանապարհից տրեխները քրքրած, ոտի տակի մարմը պլոկած եւ ուրախ ու երջանիկ, եթէ կարողանում են գոմի մի անկիւնում գաղտագողի ապաստարան գտնել եւ մի կտոր չոր հացով կշտանալ։

Անգլիացի զինուորը, որ կուի է գնում տաք հագնած, զգեստի աւելորդ պաշարը ետեւից, ճաշին, ընթրիքին մի քանի տեսակ կերակուր վայելելով, որը պատերազմ գնալիս չի մոռանում հետը տանել եւ իր Foot ball-ը (ոտնախաղի գնդակ), որի համար ամէն րոպէ պատրաստ կանգնած են բժիշկները, վիրաբուժները գլուխեան քոյրերը,— այս բոլոր յարմարութիւններով անգլիացի զինուորը հերոս է, եթէ մանակցել է մի երկու պատերազմների, ուր թշնամու երեսն անգամ չի տեսել։

Հերոսութի՛ւն...

Բայց գիտէ՞ նա գիշերները քրտնաթոր վազել՝ ահագին բեռը շալակին, վազել, որպէսզի գեռ լոյսը չբացուած այս ինչ լեռան գլխին գիրք բռնի։ Գիտէ՞ նա երկու երեք օր անօթի մնալուց յետոյ՝ գոհանալ ոչխարապահ շների համար պատրաստած կոպիտ «քեօթով» (թեփհաց)։ Գիտէ՞, թէ ինչ է նշանակում լեռան կատարին, մի քարի տակին կծկուած՝ ծարաւից տապակուել, երբ մօտակայ ձորի միջով աղբիւրն է կչկչում։ Կուե՞լ է նա փամփուշտները համրելով՝ ձիւնի վրայ փռուած առաւօտից երեկոյ. գիտէ՞ նա երգել ու «կլոր» պար բռնել գնդակների տարափի տակ, ցրտից փայտացած ձեռներն ու ոտները բանալու համար...

Ամբողջ գնդից հազիւ մի տասնեակ մարդ կորցրած անգլիացի կամաւորները ընդունում են ամբողջ ազգի կողմից իբրեւ առանձին պատիւների արժանի հերոսներ, իսկ հարիւրապատիկ թուով թշնամիների դէմ օրհասական կռիւ մղած եւ ընկերների կէսը զոհը տուած հայ զին-

ւորները ամենաբարեյաջող դէպքում միջին թարութիւն են գտնում միմիայն իրենց սրտակից մտերիմների նեղ շրջանում։

Իսկ դէս ու դէն ցրուած հալածական զինուորնե՞րը. իսկ զոհուածների անտէր մնացած ընտանիքնե՞րը, սուլթանի ճանկերում բռնուածնե՞րը...

Հասարակութիւնը նրանց չի ճանաչում, նրանցով չի զբաղւում, նրանց վիճակի մասին չի մտածում։ Դեռ լաւ որ սուլթանի արտաքսմանական վարձկանների հաջողները նրանց շատ քչերի ականջն են հասնում։

Մեր անզգայ հասարակութիւնը այդ բեռն էլ է դրել յեղափոխականների ու յեղափոխական կազմակերպութեան վրայ. այդ օգնութիւնն էլ նրանցից է սպասում, թողոքելով նոյնիսկ երբեմն որ այստեղ կամ այնտեղ անխնամ ձգուածներ կան։ Բայց ոչ յեղափոխական ընկերները եւ ոչ յեղափոխական կազմակերպութիւնը, չնայած իրենց գործ դրած ջանքերին, չեն կարող ըստ կարի օգնութիւն հասցնել այն պարզ պատճառով, որ իրենց նիւթական միջոցները չափազանց սահմանափակ են։ Եւ այդ մինչեւ այն աստիճան, որ յաճախ յանցանք է համարւում կենդանի գործիս կտրել եւ նպաստ տալ նոյնիսկ գործից նոր վերադարձած եւ դեռ աշխատանք չգտած ընկերոջ։

Ուրիշ կերպ էլ չի կարող լինել։ Ամենամեծ պետութիւններն անգամ, իրենց միլիարդներով հանդերձ, անկարող են հանդիսանում հիւանդ զինուորների, վիրաւորեալների հոգատարութեան ծախքերը ամբողջովին իրենց վրայ առնել։ Նրանք դիմում են ժողովրդի աջակցութեան։ „Կարմիր Խաչի“ հասատատութիւններ ամէն երկիր ունի։ Եւ ամէն տեղ, ուր կայ կռիւ կամ ուր սպասւում է կռիւ, որի անխուսափելի հետեւանքը պիտի լինեն կենդանի նահատակները, բուն կռւող մարմնին կից պէտք է գոյութիւն ունենայ եւ մի ուրիշ կազմակերպութիւն, որի նպատակը լինի խնամել վանդուածներին, վնասուածներին։ Այդ դէպքում միայն կը թեթեւանայ կռւող մարմնի բեռը, այդ դէպքում էլ կռւողները աւելի սրտով կը դիմեն առաջ։

Ռուս «Ժողովրդային Կամք» կուսակցութեան կռւի շրջանում յեղափոխական «Կարմիր Խաչ»ի չնորհին էր, որ հազարաւոր աքսորեալներ, բանտարկեալներ, փախստականներ հնարաւորութիւն ունէին քիչ թէ շատ տանելի վիճակ ունենալ իրենց դժբախտութեան վայրերում։

Դա մեր պակասներից մէկն է։ Հայկական «Կարմիր Խաչ»ի հասատատութիւնն է, որի անհրաժեշտութիւնը ծանրացած է մեզ վրայ տարիների ընթացքում եւ որի իրագործման մենք գոնէ հիմա գիտենք։ Իրամ. կգեան, ճերմակեղէն բաշխել բանտարկեալներին, աքսորեալներին, նախնական օգնութիւն հասցնել կռւից դարձածներին, գործ գտնել այնպիսիների համար, որոնք ընդունակ են աշխատելու, հայթայթել կռիւ գնացողներին վէրք կապելու համար անհրաժեշտ իրեր եւայլն, — ահա այն լայն ասպարէզը, որ ունի իր առաջ հայկական «Կարմիր Խաչը»,—մի գործ, որ նա կարող է տանել մի քանի դէպքերում նոյնիսկ օրինականութեան սահմանից դուրս չգալով։

Հայկական «Կարմիր Խաչ»ի ընկերութիւնը անհրաժեշտ է մանաւանդ ապագայ կռւի յաջողութեան համար։ Պահանջը մեծ է եւ շարունակ պիտի մեծանայ։ Մարդիկ, որոնք մի ժամանակ ամենայն յօժարութեամբ զոհել են իրենց ունեցած-չունեցածը, իսկ հիմա թափառում են յետին թշուառութեան մէջ, տեղ չգտնելով իրենց չոր գլուխը դնելու համար. երիտասարդներ, որոնք դժբախտութիւն են ունեցել կրակի մէջ ամբողջովին չխորովելու, բոլոր հաշմանդամները, բանտարկեալները, աքսորեալները, իրենց ապրուստի միակ ապաւէնը կորցրած ընտանիքները, յեղափոխական բոլոր կենդանի մնացած զոհերը, վերջապէս նրանք, որոնք աչքի առաջ ունեն նոյն դրութեան մէջ ընկնելու տխուր հեռանկարը, — բոլորն էլ օգնութիւն են սպասում մի հասարակութիւնից, որի համար իրենք այնքան բուռն անձնուէր կրակ են նետել եւ պիտի նետեն։

Ե՞ւ մի՞թէ հայ զինուորը դեռ եւս չի արժանացել այդ օգնութեանը։

Ն – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

(ՈՒՂՂԱԾ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ)

Այս տեղեկագրի հեղինակն է Բաքկէն վարդապետ։ Իր առաջնորդական պարտականութիւն կատարելու համար էր — տեղեկագրի կազմելը — որ նա ծերբակալուեց Տարօնում եւ ուղարկուեց Կ. Պոլիս։

—

Պիթլիսի կուսակալութեան Մուշի գաւառն, որու մէջ կը գտնւի նաև Սասուն գաւառակը, զեղծումներու, անհանդուրժելի կեղեքումներու և սոսկալի ոճիրներու թատր եղած է։ Այս չարիքներն կը գործին զանազան ձեւերով և դրութիւն մը դարձած են հայ տարրը փճացնելու համար։ Ահաւասիկ անոնց ամփոփումը։

Ա. Հայ հողագործներն, որոնք երկրագործական պանդային դրամագլուխը հայթայթած են, մեծ դժուարութեամբ կրնան փոխառութիւն ընել անկէ. չնչին գումարի մը համար անոնց մեծարժէք արտերն ու կալուածներն գրաւի առնելով և պայմանաժամը լրանալուն՝ կը նեղեն զանոնք այնքան, որ կըստիպւին արտերը կամ պանդային թողուլ, կամ թիւրքերուն ծախել, չնչին գնով, զորօրինակ 10,000 ղուրուշ արժող կալուածը, 1,500 կամ 2,000 ղուրուշ և նոյն համեմատութեամբ։

Բ–դ. Օրէնք է որ ուղիներու շինութեան համար ամէն չափահաս արու տարին կամ 12 ղրշ. վճարէ կամ շորս օր անձամբ աշխատի. սակայն հակառակ այս օրէնքին՝ թէ դրամը կը գանձեն և թէ գիւղացիները կ'աշխատցնեն, զորօրինակ 100 բանւոր տալու պարտաւոր գիւղ մը թէ 1,200 ղրշ. կը վճարէ և թէ բռնի աշխատութեան կ'ենթարկւի, և այն ալ օրէնքով սահմանուած ժամանակէն աւելի։ Ասկէ զատ, բանւորներու թիւը ըստ կամս կը բարձրացնեն և նոյն հաշւով կը պահանջեն տուրքը և մինչև բացէն գումար մը չառնեն, յաւելեալ թիւը չեն գեղջեր։ Գիւղացիներու սայլերն ալ՝ հակառակ օրինաց, տարապարհակ աշխատութեան կը տանին օրերով, քսան սայլ ունեցող գիւղէն քառասուն կը պահանջեն ու այս պատրւակով կաշառ կառնեն, սայլերու անասուններ անօթութեան և տաժանելի աշխատութեան չդիմանալով՝ կը սատկին, գիւղացիք կը ծեծւին, անօթի կը թողուին ու տարապարհակը ցանքի եղանակին՝ այն է գարնան՝ տեղի ունենալուն՝ երկրագործութիւնը կը դադրի։

Գ–դ. Այս տարի, միևնոյն կեղեքումներով, Մշոյ կառավարիչը կառավարական երեք մեծ պաշտօնատուններ շինել տուած է հայոց, որոց շինութեան բոլոր նիւթերն, վարպետներու վարձքերն ու այլ ծախքերը հայ

(Շարունակութիւնը տեսնել երես 25)

ԳՈՐԾՈՂՆԵՐ

(1890-1900)

Սիրեցէ՛ք այս պատկերները։

Տասնամեայ արիւնոտ պատմութեան սիրտանքն են դրանք, զարդերը մեր յեղափոխութեան, բողոքողներ՝ տարկութեան մէջ, կուռողներ՝ գլխակորների շրջանում, ազատութեան կարապետներ՝ բռնութեան ձորերում...

Ուշի ուշով նայեցէք այս պատկերներին։

Այդ համեստ, անպաճոյճ, իրենց „փոքրութեան մէջ մեծ“ դէմքերն են, որոնց կենդանարար ձայնը կուրերգեր հնչեցրեց Վասպուրականի դաշտերում, Սասունի ազատ լանջերին, Կարինի բարձրութեան վրայ, Պոլսի թաղերում, ժպիտը երեսին՝ մահուան դիմաց, յոյզը կրծքում՝ թմրութեան առաջ, բողոքը շրթունքներին՝ կախաղանի վրայ, գլուխը բարձր՝ զնդանների մէջ...

Բազմահատոր չէ նրանց պատմութիւնը, բայց ողբերգական, յուսատու, կրակոտ։ Մի՛ մոռացէք այդ պատմութիւնը։ Յուսահատութեան ծանր ժամերին նրանց դիմեցէք։ Նա սիրտ է շարժում, ոգի է ներշնչում, հանգող աչքերին փայլ է տալիս։

Մեծ չէ նրանց թիւը. հազիւ տասնեակներ՝ անթիւ, անհամար զոհերի շարքերում։ Սակայն ոչ էլ այնքան փոքրաթիւ, ինչպէս այս նկարներն են վկայում։ Քաջերի այս ալբոմը լիակատար չէ։ Նա չի պարփակում նոյնիսկ այն մարտիկներին, որոնք կուռ գնացին „Դաշնակցութեան“ դրօշի տակ։ Շատերը ընկան կուռ դաշտում։ շատերն էլ կուռ ճանապարհին, բայց առանց յիշատակի—առանց կենսագրութեան ու պատկերի։ Նրանց անունները միայն գիտենք, և գործերը անմահ։

Ահա ժողովրդական հերոս՝

ՍԵՐՈՎԲ—ՑԱՐՕՆԻ ԱՌԻՒԾԸ

Ահա կազմակերպող ոգին՝

ԳՆՈՒՆԻ—ՍԱՄԱԹԻԱՅԻ ՌԱԶՄԻԿԸ

Ահա չյիշատակուած ընկերակուռողներ զոհուած յեղափոխական շարքերում. ահա և ուրիշ նահատակներ կուռ դաշտը ելած այլ կուսակցութիւնների դրօշի տակ, զատ-զատ խմբերում, բայց միշտ ժողովրդի համար, միշտ ազատութեան անունով։

Յարգա՛նք քաջերին։

Սիրենք նրանց գործը, սիրենք նրանց պատկերները։



ՊԵՏՕ

(ԱՂԷՔՍԱՆԴՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ)

Մեր հայրենիք թշուառ, անտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ.
Իւր որդիքը արդ կանչում է
Հանել իւր վրէժ քէն ու ոխ։

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի որ իւր ազգի
Ազատութեան կը զոհի։

Սպանուած 1896-ին Վասպուրականում

(„Դրօշակ“ թիւ 22, 1896)։

ՎԱՋԳԷՆԻ ԽՈՒՄԲԸ

Կոտորուած 1898-ին

(„Դրօշակ“ թիւ 3, 1899)



ԿԱՐՕ — ԱՐԻՍՏԱԿԷՍ ԶՕՐԵԱՆ

Սպանուած 1897-ին

(„Դրօշակ" թիւ 16, 1897)

ԿՐԷՏԸՑԻ

(Ա. ՍԻՐԱՌԵԱՆ)

Սպանուած 1897-ին

(„Դրօշակ" թիւ 8, 1898)

ԽԱՆ-ԿԱՐԱՊԵՏ ԴԱՒԹԵԱՆ

Սպանուած 1897-ին

(„Դրօշակ" թիւ 5, 1898)



ՍԱՂԱԹԷԼ ԽԱՆ ԶՈՀՐԱԲԵԱՆ

Սպանուած 1897-ին

(„Դրօշակ" թիւ 2, 1898)



ՄԱՀԼԱՄ ԳԻՒՂԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

Գլխատուած 1898-ին

(„Դրօշակ" թիւ 1, 1899)

ԽԱՉԱՏՈՒՐ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, *մոկացի.* ՑԱՐՈՒԹԻՒՆ, *ուլմցի.*

ՍՏԵՓԱՆ, *խիզանցի.* ՀԱՐՒԿ, *շատախցի.* ԳԱԲՐԻԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ (ՄՆԶՕ).

ՆԱՀԱՊԵՏ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ (ՆԱԽՕ), *ոզմցի.* ՑԱՐՈՒԹԻՒՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ, *մոկացի.* ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՕՑԵԱՆ։

ՅՈՒՆՕ — ՅԱՐՈՒԹԻՒՆ Ռ.ՂԱ

Մեռած 1893-ին

(„Դրօշակ" թիւ 3, 1892)



ԵԳԻՊՏԱՑԻ — ԱՐՏԱՇԷՍ ԴԵՒԵԱՆ

Մեռած 1897-ին

(„Դրօշակ" թիւ 13, 1897)



ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ԴԻԱԿՆԵՐԸ ԷՐԶՐՈՒՄԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՑԱՆ ԴԱՇՏՈՒՄ

ՊԵՏՐՈՍ ՓԱՐԵԼԱՆ — ԲԱՐԻԿԷՆՍԻՆԻ

Սպանուած 1896-ին

(„Դրօշակ" թիւ 27, 1896)

Սպանուած 1896-ին

(„Դրօշակ" թիւ 3, 1896)



ԱՐՏԱՇԷՍ ՄԻՍԱԿԵԱՆ

Սպանուած 1896-ին

(„Դրօշակ" թիւ 9, 1897)



ԶԱՒԷՆ—ՑԱԿՈԲ ՂԱՐԱԿԷՕԶԵԱՆ

Սպանուած 1897-ին

(„Դրօշակ" թիւ 15, 1897)



Սպանուած 1896-ին

(„Դրօշակ" թիւ 19, 1896)



ՆԵՐՍԷՍ ՄԻՍԱԿԵԱՆ

Սպանուած 1896-ին

(«Դրօշակ» թիւ 23, 1896)



ԼԵՒՈՆ ՆԷՎՐՈՒԶԵԱՆ

Սպանուած 1896-ին

(«Դրօշակ» թիւ 23, 1896)

ՍՈՂՈՄՈՆ

Սպանուած 1896-ին

(«Դրօշակ» թիւ 23, 1896)



ՄԿՐՏԻՉ ԳԱՐԱԳԷՕԶԵԱՆ

Սպանուած 1896-ին

(«Դրօշակ» թիւ 23, 1896)



ԳՐԻԳՈՐ ԳԼԸՃԵԱՆ

Մեռած 1898-ին

(«Դրօշակ» թիւ 11, 1898)

ՂԱՐԱԲԱՂՑԻ ԽԻՀՕ
Սպանուած 1896-ին

ՂԱՐԱԲԱՂՑԻ ՆԻԿՕԼ
Սպանուած 1896-ին
(«Դրօշակ» թիւ 1, 1897)



ՎԱՐԴԱՆ (Ախալցխայի)
Սպանուած 1894-ին
(«Դրօշակ» թիւ 6, 1894)

ԱՒՏՕ—ԱՒԵՏԻՍ ՕՀԱՆԵԱՆ
Սպանուած 1898-ին
(«Դրօշակ» թիւ 1, 1899)



ՎԱՀԱՆ—ՄԻՀՐԱՆ ԹԻՐԵԱՓԵԱՆ
Սպանուած 1900-ին
(«Դրօշակ» թիւ 2, 1900)

ԳՈՒՐԳԷՆ — ԲԱՂԴԱՍԱՐ ՄԱԼԻՔԱՆ

Սպանուած 1899-ին

(«Դրօշակ» թիւ 3, 1900)



ԱՐԱԲՕ

Սպանուած 1893-ին

(«Դրօշակ» թիւ 6, 1894)



ԱԲՐՕ

(ՄԿՐՏԻՉ ՄԱՀԱԿԻԱՆ)

Սպանուած 1896-ին

(«Դրօշակ» թիւ 18, 1896)

Ա՞ՇՈՏ-ԹԱԹՈՒԼ—ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆ

Կախաւած 1899-ին

(„Դրօշակ" թիւ 8, 1899)

Նահատակուած 1895-ին

(„Դրօշակ" թիւ 26 1896)

ՅՈՎՀԱՆՆԷՍ Կ՚ՈՐԿՈՏԵԱՆ

Սպանուած 1895-ին

(Տես „Կարնոյ Ցիշատակին" բրօշիւրը)

ԿՈՒԿՈՒՆԵԱՆԻ ԽՄԲԻ ՍԻԲԻՐ ԱՔՍՈՐԻԱԾՆԵՐԸ

1. Սարգիս Կուկունեան, 2. Կոստանդին Լիսինեան, 3. Ռուբէն Յովհաննիսեան, 4. Մանուկ Գալստեան, 5. Իլյաթ Մինասեան, 6. Աւետիս Մարտիրոսեան, 7. Ս. Յարութիւնեան-Ծերունի, 8. Մկրտիչ հաճի Դանիէլեան, 9. Մանուկ Գալստեան, 10. Դօթօեան, 11. Աւետիս Մանուկեան, 12. Եփրեմ Դաւթեան, 13. Զալչեան, 14. Մուրադ Ղարմաղեան, 15. հաճի կարապետ Բայչեան, 16. Ռուբէն Դերծիկեան, 17. Բարսեղ Գամանճեան, 18. Վարդան Բոշեանց, 19. Մինաս Օղբաշեանց, 20. Պետրոս Գրիգորեան, 21. Մովսէս Մելքումեան, 22. Արզամ Պետրոսեանց, 23. Գրիգոր Էքմէքճեան: *(Տես „Կուկունեանի խմբի արշաւանքը“. հրատ.*

գիւղացիներէն առնուած են. ոչ միայն մարդիկ, սայլերն ու անասուններն կ'ենթարկուին տարապարհակ աշխատութեանց, այլև կը կտրտեն գիւղացոց ծառերն և գերաններն ևս։

Դ-րդ. Միևնոյն գրութեամբ կառուցելու ձեռնարկուած է Հաճի Շէրիֆ ճամի մինարէն և շէնքին բոլոր տարապարհակ աշխատութիւններն բեռցուած են հայ գիւղացիներու վրայ, մինչդեռ օգոստափառ (sic) սուլթանը շնորհած է (!) շինութեան համար պէտք եղած դրամը։

Ե-րդ. Պէլէտիէի վարչութիւնն ալ իր մասնաւոր կեղեքումներն ունի, զորօրինակ, այս տարի Պէլէտիէի շէնքը նորոգեց. Բէիս Խալիլ էֆէնտի հայերէն առաւ շէնքին կազմածները, նոյնպէս հայ վարպետներն աշխատցուց, գիւղացիներու ծառերը կտրեց գինը սակարկելով, բայց բնաւ դրամ չվճարեց, և ասկէ զատ՝ շէնքին համար ալ բռնի „իյանէ" (նպաստ) հաւաքեց հայ արհեստաւորներէն ու խանութպաններէն։ Պէլէտիէն՝ քաղաքին պողոտաներն կանոնաւորելու պատրւակով՝ չարաչար աշխատցուց և իւրաքանչիւր չափահաս անհատէ տասնական ղրշ. գանձեց։ Հեռագրատունը շինել ձեռնարկեց, հայոց գիւղերու ծառերը կտրեց ու ձրի-ձրի փոխադրել տուաւ գիւղացոց. շէնքն հայ բանուորներու ձեռքով սկսաւ և ասոնց ոչ միայն վարձք չտուաւ, այլև ամէն մէկ գիւղէ 3-4-500 ղրշ. „իյանէ" հաւաքեց։ Այս շինութիւնք աւարտելէ յետոյ՝ ձեռնարկուեցաւ զօրանոցի շինութեան, որու համար պէտք եղած բաները սկսան հայ գիւղերէն հաւաքել՝ զինուորներու և ուրիշ պաշտօնէից ձեռամբ, դարձեալ „իյանէ" ժողովելով։

Զ-րդ. Թիւրք և քիւրդ աղաներ վերջին քանի մը տարիներու մէջ ձեռնարկած են հայ գիւղերու տիրանալու և զանոնք գրաւելու։ Քիւրդ-Մէյտան, Խըզըլաղաճ, Աւազաղբիւր, Արտխօնք, Անծնուտ, Փողոկով, Քարձոր, Ցըրօնք, Խոփեր, Ջրիկ, Տոմ, Գոմս, Յունան, Առընչվանք, Սոխգոմ, Ալիղբրնան, Առաղ, Մսկօնք, Սուլախ ևն գիւղերու մէջ հաստատուեցան Թիւրքերն. իսկ քիւրդերն անոնց օրինակին հետևելով՝ դաշտին հայաբնակ գիւղերէն Խասգիւղ, Քրդագոմ, Երիշտիր, Աւազաղբիւր, Ծղակ և ուրիշ շատ մը գիւղերն, ինչպէս նաև Սասունի, Պուլանըխի ու Մանազկերտի գիւղերը, գրաւեցին, հայոց կալուածները խլելով անոնց ձեռքէն և բնակութիւն հաստատելով։ Հայ գիւղերու տիրապետող այս քիւրդ և Թիւրք աղաները հողագործ ժողովուրդէն „սէլէֆ" անուն տուրք մը կը գանձեն, մերիպայութիւն (կեսրարլուծք) ընել կուտան և արդիւնքին մեծ մասը կը յափշտակեն. փոխ դրամ կամ արմտիք կուտան ու կըրկնապատիկը կառնեն, տարապարհակ կ'աշխատցնեն, ընչին գումարի փոխարէն արտերը գրաւ կառնեն և յետոյ կ'իւրացնեն, և գիւղացիներն այսպէս մերկացնելով՝ կ'ենթարկեն զանոնք իրենց ծառայութեանց։

Է-րդ. Գիւղերը գիւղախմբերու (նահիյէ) բաժնող վերջին կարգադրութեանց համաձայն, Մշոյ դաշտի գիւղերն երեք շրջանակի վերածուեցան և երեք կեդրոն որոշուեցաւ—Զիարէթ, Ախճան, Աւազաղբիւր գիւղերը։ Թէև բոլոր գիւղերու բնակիչներն հայ, սակայն իսլամ միւտիրներ դրուեցան, իւրաքանչիւրն 8, 10, 12 պաշտօնեայով։ Այս ամէն պաշտօնեաները թէ գիւղախմբերու կեդրոնին և թէ գիւղերուն մէջ իրենց բոլոր պէտքերը—ուտեստ ևն—ձրի կը խլեն գիւղացիներէն կեղեքումներով, իրենց թոշակները և կառավարական „հէվալէները" իրենք կը հաւաքեն ժողովրդէն ու ընկալագիր չեն տար։

Ը-րդ. Նահիյէի հաքիմներ քրիստոնէից „թէրքէքները" (ժառանգութիւն) գրելու պատրւակով գիւղերը կերթան և թէրքէքի անունով դրամներ կը հաւաքեն յանիրաւի։

Թ-րդ. „Աղնամի" տուրքը (անասնատուրք) հաւաքելու համար, ոստիկանէ և զինուորէ բաղկացած 20-25 հոգինոց խումբեր՝ ձիաւոր, գիւղերը կը պտտին, իրենց ու ձիերուն ուտեստը գիւղացիներէն կը խլեն և աւարառութեամբ պակսած ու տուրքերու և պարտքերու փոխարէն գրաւած ոչխարներու թիւը, առանց զեղջելու, նախորդ տարւայ հաշւով կը գանձեն աղնամը։

Ժ-րդ. Բռնի և առհարկի իսլամութիւնն ընդունողներուն թիւը կը բազմապատկի հետզհետէ։ Գեղանի կիներ ու աղջիկներ կ'առևանգուին, կը բռնաբարուին և իրենց պարագաները սրէ անցնելու սպառնալեօք՝ դատարան կը տարուին, ուր իրենց բերնէն յայտարարութիւն կը կորզուի կրօնափոխութեան։ Ճիպրանցի աշիրէթէն քիւրդ Սայիտ՝ Պոսթաքինտի մէջ հայ կին մը կըսպաննէ և Նազար անուն անձին Մարիամ աղջիկը կ'առևանգէ ու կը բռնաբարէ։ Թէպէտ աղջիկը կառնի քովէն, բայց ոճրագործը, Սայիտ, որ ազատ թողուած էր, կըսպաննէ աղջկայ հայր Նազարը և գիւղապետ Կինճօն և կըսպառնայ մօրը բոլոր ընտանիքը սրէ անցնել, եթէ աղջիկը իրեն չյանձնուի, և այսպէս կը յաջողի ձեռք ձգել իր զոհը։

ԺԱ-րդ. Հայ ժողովուրդը սիրով կը վճարէ իր տուրքերը, բայց գանձումը այնպիսի ձևերով կը կատարուի, որ թէ տառապանք կրէ ու թէ քանի մը պատիկը հատուցանէ. զորօրինակ, միևնոյն գիւղը ետևէ ետև հարկահաններ կը ղրկուին, որոնց իւրաքանչիւրն առանձինն ուզած հաշւով ու ձևով տուրքերու քանակէն աւելի դրամ կըստանայ։ Հողագործը կողոպտելու համար՝ „սէլէֆ" անունով յափշտակութեան եղանակ մը հնարուած է առևտուրի ձևին ներքև. զորօրինակ, տասն ղրշ. տալով, սէլէֆ կ'ընէ հողագործին մէկ գառը, սակայն մէկ երկու ամիսէն յանձնելու պայմանաւ, մինչդեռ այն ատեն գառը կարժէ 25-30 ղրշ։ Քսան ղուրուշով սէլէֆ կ'ընէ հողագործին քիլէ մը ցորեն հունձքի ատեն տուելու պայմանաւ, երբ նոյնչափ ցորենը 60-120 ղրշ. կ'արժէ այն ատեն։ Հարկահաւաքները կամ իրենք սէլէֆճի են, կամ սէլէֆճիներ կը տանեն մէկտեղ գիւղերը, ամենքն ալ իսլամ, և եթէ գիւղացիք պարտք ալ չունենան վճարելու, զանազան պատրւակներով բռնի սէլէֆ ընել կուտան գիւղացիներու արմտիքն ու կենդանիները և լծկան եզները կը ծախեն, որով ժողովուրդը չկրնար հերկել արտը։ Հարկահաւաքները գալիք տարիներուն տուրքն ալ կը գանձեն, գաղթողներուն ու պանդխտողներուն բաժինն մնացողներէն կը պահանջեն, հարկի փոխարէն կը խլեն անոնց քիչ մը պարէնը ու անոնց տնակները կը քակեն ու կը ծախեն, իրենց ձիերուն կերը գիւղացիներէն կառնեն, ազգի ու կրօնքի կը քֆրեն, կարասիները առ թշնամութեան կը ջարդեն, և այս անիրաւութեանց դէմ բողոքող գիւղացիներն յեղափոխական և անհնազանդ կը նկատուին։

ԺԲ-րդ. Դատարաններու առջև կը հալածուին հայերը

և միշտ իսլամին կը տրուի իրաւունքը, այնպէս որ այլևս դադրած են հայերը դատարանի դիմելէ, զի վճիռը իրենց դէմ է միշտ։ Այսպիսի անարդար վճիռներով՝ 1) Ս. Յովհաննու վանքին սեպհական Կելեխօլ ըսուած ագարակն, որուն տէրը եղած էր քառասուն տարիէ ի վեր օրինաւոր սէնէտներով և դատական վճռագրերով, Մշոյ շէրիի դատաւորը քանի մը քիւրդերու կուտայ, անոնց պարագայից սուտ վկայութեամբ։ 2) Շատախի Սէմալ գիւղացիներու 50-60 տարիէ ի վեր տէր եղած գետինը նոյն դատաւորը կուտայ Խեանցի քիւրդ ցեղապետ Քէօռ Սըլէյի, որ 95-ին Սասնոյ գլխաւոր կոտորիչներէն մէկն էր։ 3) Նոյն դատաւորին ձեռօք Մշոյ Մօկանք գիւղի Ս. Առաքելոց վանքին սահմանակից հարիւրաւոր տարեայ արօտավայրը մշեցի Իպրահիմ Թիւրքին կը տրուի։ 4) Ս. Աղբերկի վանուց Ղազար վարդապետ կըսպանուի սասունցի ու պըլրքցի քրդերէն. միաբանութիւնը կը բողոքէ, բայց կառավարութիւնը ֆէդայիներն ըրած են ըսելով՝ չարագործներն անպատիժ կը թողու։ 5) Համիդիէի զօրագունդին գայմագամ ճիպրանցի Իպրահիմի հրոսախումբն Ուրուխ գիւղի 750 ոչխարը կը յափշտակէ, և թէպէտ 400-ը Բաղէշի նախորդ կուսակալը ետ տալ կուտայ, սակայն շէրիի դատաւորը այդ 400-ը ետ կառնէ գիւղացիներէն, ըսելով որ գողցուածներն անոնք չէին, ու կը յանձնէ յափշտակողներուն, դատական ծանր ծախքերու դատապարտելով նաև ոչխարին բուն տէրերը։ 6) Նշանաւոր աւազակապետ քիւրդ Մէհմէդ Ալին կըսպաննէ Մշոյ Ս. Կարապետի վանուց սարկաւագ տիրացու Մովսէսը. միաբան վարդապետք կը բողոքեն, սակայն փոխանակ ոճրագործը ձերբակալելու, բողոքող վարդապետներն, որոնց մէջ է ուլթսունամեայ կրօնաւոր մը՝ քաղաք կը բերուին՝ իբրև կասկածելի, ու ոճրագործին տեղ՝ այս սգաւորներն կ'ենթարկուին հարցաքննութեան։

ԺԳ-րդ. Բերքերու տասանորդական տրոց միլթէզիմները թիւրքերն են. հայերը թիւրք միլթէզիմներու վրիժառութենէն վախնալով՝ չեն կրնար մասնակցիլ իլթիզամի աճուրտին։ Հայ գիւղացիք եթէ խմբովին ուզեն իլթիզամ ընել, աճուրդի ատեն թիւրքերը այնքան կը բարձրացնեն գինը, որ եթէ հայոց վրայ մնայ բարձրացած գինը, ամբողջ հունձքին արժէքն ալ չբաւեր հատուցանելու այդ գումարն։ Միլթէզիմները իրենց ընկերներովը, սպասաւորներով ու ձիերովը ձրի կերակրողը, անոնց տուն տեղ յատկացնողը գիւղացիք են բոլորովին։ Թիւրք միլթէզիմները օրինօք սահմանեալ քանակէն աւելի տասանորդական տուրք կը պահանջեն և կըստանան։ Բոլոր կալերէն՝ տասանորդական տուրքէն զատ՝ „կալմաստ" անունով արմտիք կառնուն. երկար ատեն բերքերը չեն չափեր, որպէսզի հունձքի տէրերն հաճեցնեն միլթէզիմները։ Արմտեաց շեղերուն վրայ դրած նշանները կ'աւրեն և կամ ընդ երկար բացը թողլով՝ ինքնին նշաններն կաւրին, և այս պարագայէն օգուտ քաղելով՝ իբրև չչափուած և տասանորդական տուրքը չառնուած՝ վերստին տուրք կըստանան։ Պարտէզներու, այգիներու բանջարեղէններէն ու պտուղներէն ծանր տուրք կը պահանջեն և գիւղացիք այս պատճառաւ դադրեցուցած են ասոնց մշակութիւնը. թէև խոտի տասանորդը խոտով կը փոխարինի, բայց անոնք դրամով կը գանձեն և խոտերը գրած ատեն՝ ցուցակները խարդախելով՝ 30-40 ղրշ. արժող մէկ բարդ խոտէն 80-90-120 ղրշ. կը գանձեն։ Տասանորդական արմտիքը ամբարները ձրի փոխադրելու մասին օրէնքը ցոյց տուած է հեռաւորութիւնը և գիւղացին պարտաւոր չէ այդ հեռաւորութենէն անդին ձրի փոխադրելու, սակայն միլթէզիմները բռնութեամբ ձրի փոխադրել կուտան, մինչև 8-9 ժամ հեռաւորութիւն ունեցող տեղեր։ Թէ՛ արքունի գանձուն և թէ՛ հողագործ ժողովրդեան շատ օգտակար պիտի լինէր, եթէ այս տուրքը հողային տրոց վրայ բարդուէր և գանձուէր։

ԺԴ-րդ. Հասարակաց ապահովութեան պահպանման պաշտօնով, զինուորական ջոկատներ (գըրսէրտարիներ), 15-30 ձիաւոր զօրքերէ և ոստիկաններէ բաղկացած, կը ղրկուին Մշոյ դաշտի և Սասունի գիւղերը, և հայ ժողովուրդը հարկադրեալ է ասոնց և իրենց ձիերուն ուտեստն հոգալու։ Երբեմն հարկահաւաքութեան պաշտօնն ալ ասոնց կը յանձնուի, որոնք բռնութիւն և զրկանք ի գործ կը դնեն։ Գըրսէրտարիները ձևակերպութեան համար հայ գիւղապետներէն ստացագիր կառնեն ջոկատներուն և ձիերուն ուտեստի փոխարէնը տրուած ըլլալու մասին, բայց դրամը չի վճարուիր։ Բացատի, գըրսէրտարիները տուրքերու հաշուոյն դրամ կը հաւաքեն, բայց ընկալագիր չեն տար և կամ այնպիսի ընկալագիր մը կուտան, որ կառավարութեան մուհասէպէի պաշտօնեայն չ'ընդունիր, և ժողովուրդը վճարած գումարին պարտականը կը մնայ դարձեալ։

ԺԵ-րդ. Բէժին ալ ուրիշ պատուհաս մը եղած է խեղճ գիւղացիներուն։ Պաշտօնեաներն այժմ իսլամներն են. ասոնք մեծ քանակութեամբ ծխախոտի ծրարներ կը տանեն կը թողուն գիւղերը և փոխարէնը դրամ կըստանան։ Ծխող և ոչ-ծխող ամէն ոք պարտաւոր է գնել և դրամը տալ. այս բռնութիւնը միայն հայ գիւղերու համար կըլլայ, և այսպէս ամէն շաբաթ մէն մի գիւղէ 50-150 և աւելի դրամ կը գանձեն։

ԺԶ-րդ. Ժողովուրդը փճացնող և զայն տառապանքներու մատնող ծանր հարուածն եղած է՝ յեղափոխութեան բառին կամ պատրուակին տակ՝ անոր դէմ ի գործ դրուած հալածանքը, զոր անխնայ ի գործ կը դնեն ոչ միայն կառավարական պաշտօնեայք, այլև հասարակ քիւրդն ու թիւրքն, և յաջող կերպով կը շահագործեն այդ բառը, նոյնիսկ ինպաստ իրենց անձին։ Ամէն հայ, որ դիրք մ'ունի, իբր ֆէդայի (յեղափոխական) զրպարտութեան կ'ենթարկուի, կը խոշտանգուի, կը թալանուի, կըսպանուի կամ կը բանտարկուի ու տարիներէ վերջը հազիւ ազատ կ'արձակուի չբաւոր վճռակի մը մէջ՝ տեղ տալու համար ուրիշի մը, ու այսպէս բանտեր լեցուն են միշտ հայերով։ Հային՝ իբր ֆէդայիի, բողոքն չլսուիր. տեղէտեղ երթևեկելու անցագիր չտրուիր, որով ամէն մարդ կերպով մը բանտարկուած է իր գտնուած տեղը. կ'արգիլուի խպառ զէնք կրել, մինչ ամէն իսլամի կ'արտօնուի։ Հարստահարիչ քիւրդեր հայ գիւղերու մէջ կը դրուին՝ ֆէդայիներու մուտքն արգիլելու պատրուակով, և վերջապէս հայ ժողովուրդը շահագործելու դիտումով՝ շարունակ յեղափոխականներով լեցուն ցոյց կը տրուի Մշոյ գաւառը, մինչ ոգեպահիկի կարօտ և յուսահատ հայն մտքէն իսկ չանցներ այդպիսի բան։ Վերջին մէկ տարուան մէջ հետևեալ հայ գիւղերն յարձակմանց, աւարառութեանց և սպանմանց ենթակայ եղած են՝ ֆէդայիները ձերբակալելու պատրուակով. Ցրօնք, Բերդակ, Առազ, Դերքիվանք, Սու-

լուխ, Խրզբլխաչ, Կէլիէկուզան, Եղկարդ, Զորեր և Զբաղանք (որ համայնաջինջ և բոլորովին քարուքանդ եղաւ)։

ԺԵ-րդ. Մինչդեռ տուրք հաւաքելու համար իւրաքանչիւր գիւղի մէկ հարկահաւաք կը բաւէ, առհասարակ 7-15 անձեր, մեծաւ մասամբ ձիաւոր, խմբովին կերթան գիւղերը, իրենց և ձիերուն ուտեստը, միլթէզիմներու նման, աղքատ հայ գիւղացիներէն կըստանան բռնի. սովորաբար գիշերները կերթան գիւղերը, սրով և բրով տուներ կը կոխեն՝ դռներ խորտակելով. պատրաստ գրամ չունեցողները՝ ըլլան կին, այր, ծեր թէ որբ, կը տանին կը բանտարկեն ախոռներու մէջ, կը չարչարեն, սիւներու կը կապեն, կը գանակոծեն։ Յատկապէս կարգուած հարկահաւաքներէն զատ՝ կառավարական պաշտօնեաներ, զինուորներ, ոստիկաններ ևս հարկահաւաքի պաշտօն կըստանձնեն, երբ կառավարութենէն առնելիք ունին և առնելեաց փոխարէն՝ „հէվալէներ" կըստանան գիւղերուն վրայ։ Ասոնք որ գիւղն ուզեն՝ կերթան և ամէն բան ձրի է իրենց համար։

ԺԸ-րդ. Քրդաց կողմէ հայոց վրայ ի գործ դրուած հարստահարութիւնք արդէն հոչակեալ իրողութիւններ են, և սակայն վերջին տարիներս կազմակերպեալ վիճակ մը ստացան այս հարստահարութիւնք, որովհետև առանց պատասխանատուութեան ամէն խժդժութիւնք կը գործուին անարգել։ Ամէն հայ գիւղերու քիւրդ աղաներ յատկացան, որոնք կամ անձամբ բնակութիւն հաստատեցին նոյն գիւղերը և կամ իրենց ստորադասեալ մարդերը ղրկեցին, և չմնաց բնաւ հայաբնակ գիւղ մը, ուր իսլամներ չգետեղուին։ Ասոնց առաջին գործն եղաւ հայոց արտերը, տուները գրաւել, զի ասոնք այս մասին ունին ամէն դիւրութիւն և միջոց։ Հայ գիւղերուն աղաներն, անոնց արբանեակներն ու սպասաւորներն իրենց բոլոր պէտքերը բռնութեամբ կըստանան, առանց փոխարէնը վճարելու. դիմադրողք կըսպանուին։ Հայերը տարապարհակ աշխատութեամբ կը վարեն աղաներուն արտերը, կը քաղեն խոտերն ու հունձքերն։ Հայ կիներուն և աղջիկներուն մասին ի գործ դրուած բռնաբարութիւններ և առևանգումներ ծանուցեալ իրողութիւններ են արդէն։ Այս իրողութիւնք շատ աւելի յաճախած ու տիրացած են այժմ, վասնզի գիշեր թէ ցերեկ որ տուն ուզեն կը մտնեն դռներ կոտրտելով և ամէն չարիք կը գործեն անարգել։ Հունձքերը հասնելուն՝ քիւրդերը կ'իյնան հայոց արտերը, հացահատիկի խուրձերը կը յափշտակեն կը տանին, կալերը չափուած ատեն, կալմաստ անունով իրենց համար տուրք մը կառնեն բռնի։ Քիւրդ գիւղերուն սահմանակից հայ գիւղացիներու կրած զրկանքն ու հարստահարութիւնը ալ աւելի ծանր է վերոյիշեալներէն. քիւրդերը հայոց սահմանները կանցնին, հայոց արտերը կը շահագործեն, արդէն մշակուածները կաւրշտկեն կը փճացնեն. մէկ խօսքով՝ քիւրդերի համար պարտականութիւն մը եղած է հայերը հարստահարելն ու փճացնելն։ Իրաց այս վիճակին հետևանք՝ Ս. Կարապետի վանուց մօտակայ Մեղտի, Պաղլու, Խէյպիան գիւղերը աւագակապետ Մէհմէդ-Ալին, եղբօրորդին Արապը և հօրեղբօր որդին Տավաղը՝ իրենց սպասաւորներով հանդերձ՝ ապրեցնելու դատապարտուած են. Խէյպիան գիւղը 100, Մեղտի և Պաղլու գիւղերն ալ 50-ական լիրայի մօտ ղրկանաց հնթարկուած են։ Քիւրդերը իրենց սովորութիւն ըրած հարստահարութենէ զատ՝ հեծեալ, հետևակ հրոսախմբեր կազմած են, գաշտերն ու լեռները յայտնի և աներկիւղ կ'ասպատակեն, կարաւաններ, անցորդներ կը կողոպտեն, ոչխարներ ու արջառներ կը յափշտակեն։ Այս հրոսախմբերն աւարի տուած են Ցրօնք և Աւազաղբիւր գիւղերը և Ս. Աղբերիկ, Ս. Մատնավանք, Ս. Մատին Առաքելոց վանքերը։ Սասունի Զիթենք գիւղը այրացաւեր եղաւ բոլոր տուներով. Կէլիէկուզան, Եղկարդ, Զորեր, Զբաղանք համայնաջինջ եղան։ Աղբրի, Խրտան, Կէօքէվէտին գիւղերու կենդանիները յափշտակուած են։ Մշոյ դաշտի Ծխավս, Կուրավս, Ավրան, Գոմս, Ալիճան, Բերդակ, Ուրախ, Արվարինջ, Արտօնք, Վարդենիս, Ղարց, Պօսթաքէնտ, Խասգիւղ, Նորշէն, Հաւատորիկ գիւղերն ևս թալանի տրուած են։

ԺԹ-րդ. Մշոյ Սասուն գաւառի հայերը հարկադրուած են „խաֆիրութիւն" անունով յատուկ տուրք մը հատուցանել քիւրդ աղաներու, որոնք այս գաւառակը բաժնած են իրենց մէջ շրջանակներու, և այս շրջանակները նոյն տուրքը կը վճարեն ամէն ցեղապետի, որու ազդեցութեան ու բռնապետութեան ներքև են։ Արքունի տրոց նման, ամէն տարի կը նորոգուի այս տուրքը և կը գանձուի անպատճառ։ Այս տուրքը հաւաքող ցեղերն են Խեանցիք, Խալքեցիք, Պոզբքցիք ևն։ Այս տուրքը հետևեալ կերպով կը վճարուի. Սասնոյ Մատին Առաքելոց վանքը կուտայ 20 ոչխար, 20 լիտր իւղ և 1,200 ղուրուշէ աւելի ոսկեդրամ։ Կարող համարուած տուն մը 7-10 ոչխար, 5-600 ղրշ., 5-10 օխայ բուրդ. իսկ հասարակ տուն մը 3-4 ոչխար, 1-200 ղրշ., իւղ, բուրդ ևն։ Ամուսնութեան ատեն ալ խաֆիրութեան մասնաւոր տուրք մը վճարելու հարկադրուած են, և այսուամենայնիւ այս աղաներն յափշտակութիւններ և գողութիւններ կ'ընեն, մանաւանդ կառավարութեան կալուածոց պտշտօնեաներուն հետ միացած՝ խարդախ միջոցներով „թափու" ընել տալով, հայոց կալուածներն կիւրացնեն։ Քիւրդ ցեղապետները կը ծախեն ու կը գնեն իրենց մէջ։ Խաֆիր-գերի են հայերը և ամենէն եղերականն այն է որ, երբ ցեղապետ մը թալնէ ուրիշ ցեղապետի մը շրջանակին հայերը ու սպաննէ, նոյն ցեղապետն ալ միւսին շրջանակին հայերուն վրայ կը յարձակի, աւեր ու սպանդ կը գործէ, և այսպէս միշտ հայն է զոհը։ Սասունի Զիթենք գիւղի հայերը իրենց հողերը չուզեցին տալ աղաներուն, բայց հրոսախումբ մը արշաւելով նոյն գիւղն՝ տուները այրեց, աւարեց և գիւղին երևելիներէն հինգը յօշոտելով՝ դիակները գետը նետեց ու երկուքը վիրաւորեց. բնակիչք ցրուեցան ու գիւղն ջնջուեցաւ։ Այս տարի ալ Զբաղանք գիւղն բնաջինջ եղաւ ծանուցեալ կոտորածով։

Ի-րդ. Մարդասպանութիւնք սովորական դարձած են հիմա և համաճարակի պէս կը ծաւալի. ի բաց առեալ կոտորածներու առթիւ գործուած բազմաթիւ մարդասպանութիւններն, մէկ տարուան մէջ Մշոյ դաշտէն և գիւղերէն 104 հոգի սպանուած և 11 հոգի վիրաւորուած են, որոնք յականէ յանուանէ ծանօթ են, և ցուցակը կրնայ մէջ բերուիլ ի հարկին։

II

ՍՊԱՂԱՆԻ ԴԷՊԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

Սասունի Զբաղանք կամ Սեպկան հայաբնակ գիւղն բնաջինջ եղաւ ներկայ 1900 տարւայ յուլիս 3-ին,

կիւրակէէն երկուշաբթի լուսանալու գիշեր՝ շատ եղերական պարագաներով։ Բոլոր բնակիչներն, որք 30-35 տնւոր կը հաշուէին, ջարդուկոտոր սպանուեցան. անոնցմէ մաս մը, որ յաջողած էին տեղւոյն Ս. Մարաբէ եկեղեցին ապաստանիլ իրենց կեանքը փրկելու յուսով, մեռան աւելի սոսկալի մահուամբ։ Մեռնողներու թիւը կը հաշուուի 150-200 հոգի, և հազիւ 10 հոգիի չափ կրցած են ճողոպրիլ, որոնք կը մնան միայն այդ գիւղէն իբրև ապացոյցներն անոր երբեմնի գոյութեան և կենդանի բողոքներն գործուած խժդժութեանց։ Զբաղանքի բնակիչք անգիտակ էին իրենց դէմ նիւթուած այս եղեռնական դաւին, և յուլիս 3-ի առտուն, արշալոյսին՝ ենթարկուեցան յարձակման, երբ շատեր դեռ քնոյ մէջ էին։

Անցեալ տարի սասունցի Խան-Ապտալ աշայիրի ցեղապետ քիւրդ Խալիլ յարձակեր էր իր մարդիկներով Զբաղանքի վրայ, գիւղին ոչխարները յափշտակելու համար, և այս արիասիրտ գիւղացիք, որոնք հողագործ են և խաշնարած, ետ մղած էին յարձակումը և թոյլ չէին տուած որ իրենց կենդանիներն խլին։ Քիւրդ Խալիլ ոխ ունէր անոնց դէմ և միջոցը գտաւ վրէժ լուծելու սոսկալի կերպով։ Ուրիշ ցեղապետի մը հետ—Խեանցի քէօռ Սըլօ—կը միանայ և խաբելով տեղական իշխանութիւնը, թէ յաղափոխականք ապաստանած են ի Զբաղանք, այս յարձակման աղետալի հրամանը հանել կուտայ։ Բաղէշի զինուորական հրամանատար Ֆէրիք Ալի փաշան կը ձեռնարկէ գաղտնաբար զինուորական պատրաստութեանց և քանի մը վաշտ զօրքով Բաղէշէն կը մեկնի դէպի Սասուն, և իրեն կերթայ միանալու յետոյ՝ տեղւոյն ոստիկանապետը։ Ալի փաշային հրահանգին համեմատ՝ Խալիլ շրջակայ Պալաքցի, Մոտկանցի, Խարզանցի և Խիանցի քիւրդ ցեղերը ոտքի կը հանէ և կը խառնէ զանոնք զինուորական վաշտերուն, որոնք հազարի չափ զինուորէ կը բաղկանային. իսկ Խիանցի քէօռ Սըլօ հինգ հարիւր քրդերով կը բռնէ Դալորիկի և Կէլիէկիւզանի մէջտեղը և կը կտրէ Զբաղանքի հաղորդակցութեան բոլոր գիծերը։ Զբաղանք այսպէս ամէն կողմէ պաշարուելէ ետքը՝ արշալոյսին կը հնչեն փողերը և յարձակման նշանը տրուելով կը խուժին զօրքերու, քիւրդերու այս խառն գումարտակները դէպի գիւղ՝ գոռում գոչումով։ Գնտակներու տեղատարափին ներքև կըսկսի խուճապն գիւղին մէջ. բնակիչք յանկարծակիի կուգան. գիւղն պաշարուած և ողողուած էր այս խառնամբոխ գումարտակներով, փախուստի անցք չէր գտնուէր, շարժիլ կարելի չէր։ Խրճիթներու և փողոցներու մէջ զով որ կը գտնեն, գնտակով, դաշոյնով ու սուինով կըսպանեն. կիներն իրենց երեխաներով ընդառաջ կը վազեն զօրաց, կարծելով որ անոնք պիտի խնայեն տղայոց ու կանանց, սակայն կը սխալուին։ Երեխաները, նոյնիսկ օրօրոցի մանուկներն, կը ջարդուին. սուինների ծայրը կը սևեռեն զանոնք ու վեր բարձրացուցած կը քալեն, և այդ մանկանց մէջէն ոմանք սուինների վրայ դեռ ողջ՝ կը ճչեն ու կաղաղակեն։

Կիները կը մերկացուին, կը բռնաբարուին ու յետոյ կըսպաննուին։ Գիւղին Տ. Պողոս քահանային, ութսունամեայ ծերունի մը, մօրուքը կը փետեն և յետոյ բերնին երկու կողմն քիչ-քիչ կտրելով՝ կը ճղեն իրարմէ, բաժնելով ծնօտը, ու այսպէս չարչարանքի կըսպանեն։ Զբաղանքի գիւղապետ Մակարի դէմ մանաւանդ մեծէր քիւրդ Խալիլի ատելութիւնը անցեալ տարուան յարձակումը յետս վանելուն համար. ուստի յատկապէս անոր կինը, Թըմէն, փնտռել ու գտնել կուտայ և՝ տեսնելով որ յղի էր, կը ճեղքեն արգանդը, երախան կենդանի դուրս կը հանեն, կը փողոտեն զնա մօրը գրկաց մէջ ու ետքն ալ կը յօշոտեն մայրը դանակի յիսուն հարուածով։

Կը յարձակին յետոյ եկեղեցիին վրայ, սակայն անկարելի կրլլայ պատերը ծակել կամ դուռը կոտրել, ուստի գարիի և խոտի խուձեր կը դիզեն բարդիբարդ եկեղեցիին դրան առջև ու վրան քարիւղ թափելով՝ կրակի կուտան դէզերը ու կը բռնկցնեն դուռը։ Ծուխը եկեղեցիէն ներս կը խուժէ, կողկողագին աղաղակներու կը յաջորդեն հոգևարքներու հեղձամղձուկ հռնդիւնները, և յետոյ լռութիւն.—պատսպարեալք մեռած են շնչահեղձ։ Եկեղեցին ապաստանողները կը հաշուին մօտ երեսուն հոգի, որոնց մէջ են կիներ ու մանուկներ։ Ասոնց դիակներն ալ չեն յարգուիր, բզիկ-բզիկ կը յօշոտուին, և անլուր բռնաբարութիւններ և խժդժութիւններ կը գործուին անոնց վրայ, որոնք դեռ կը շընչէին։ Տասնեմէկ երիտասարդներ կուելով կը ճեղքեն գիծը ու կը փախչին, սակայն անոնցմէ վեցը կը զարնուին ու կիյնան և հինգը միայն կը յաջողին ճողոպրիլ։ Նոյնպէս երկու վիրաւոր կիներ զիրենք ջուրը կը նետեն, ու յետոյ քարի մը կառչելով՝ կազատին։

Կոտորածէն ետքը աւարի կուտան ինչքերը, կը հրդեհին շէնքերը, յօշոտուած մարմիններու կոտրուանքը ջուրը կը նետեն և եկեղեցիին ու տնակներու մէջ սպանուածները՝ շէնքերուն հետ կայրեն, իսկ դուրսը սպանուածները կը մնան արևու տակ։

Զբաղանքը ընջելէ ետքը՝ կը յարձակին Եղկարթ և Զորեր գիւղերուն վրայ, ուր սպաննութիւններ և աւարառութիւններ կը գործուին. աւարի կուտան նաև Կոգհովիտ, Կելառշ, Հոսնուտ գիւղերը և քանի մը տուն ալ Խտանի մէջ կայրեն։ Յարձակում կը կրէ նաև Զիթենք գիւղը. մարդիկ կը վիրաւորուին, խուճապի ատեն ոտքի տակ մեռնողներ կը լլնին։ Զիթենք այն գիւղն է, որ անցեալ տարի մայիսին Սասունի քրդերէն արդէն յարձակում մը կրած էր, տուներն թալնուած ու վառուած էին արդէն մեծ մասամբ ու տեղւոյն երևելիներէն երկուքն վիրաւորուած և հինգն ալ յօշոտուած ու գետը նետուած էին։

Կոտորածէն ետքը ազատուած հինգ անձինք իրենց հետ ուրիշ հայ գիւղացիներ առնելով կերթան Զբաղանք՝ զոհերու դիակները կամփոփեն ու մեծ փոս մը բանալով՝ կը թաղեն ամէնքը մէկէն։

Այլ սակայն այս ոճիրներու հեղինակները՝ մտածելով որ քննութիւն մը կրնայ բացուիլ և ահռելի ոճիրներն յայտնուիլ ու հրատարակուիլ, միջոցներ ձեռք կառնուն իրողութիւնն ծածկելու, մինչև որ իրենց ուզած ձևով պատմութիւն մը կաղապարեն և իբր ստոյգ հռչակեն։ Ուստի՝ 1) զինուորականաց կողմէ պաշարման դիծ մը կը հաստատուի և երթևեկը երկուստեք կ'արգիլուի. 2) քիւրդ Խալիլ և բօլիս Հիւսնի, Ալի փաշայի հրամանաւ, խումբ մը զօրքով կը ղրկուին Զբաղանք, դիակները դուրս կը հանեն փոսէն և խարոյկ վառելով՝ կ'աճիւնացնեն։ Ականատեսք կը պատմեն՝ թէ մանկանց դիակներն փոշիացած են խպառ, իսկ մեծերու դիակաց աճիւններու մէջ կերևին մարմնոց կտորներ. միայն քանի մը դիակներ կը թողուին առանց այրուելու, որպէս զի

անոնց համար կարենայ ըսիլ թէ՝ սպանուած յեղափոխականներու մարմիններն են. 3) Սասնոյ կողմերը գտնուած Գոմոց գիւղի Մատին Առաքելոց վանքին վանահայր Պետրոս վարդապետին և նոյն գիւղէն քանի մը հարիւր հայերու, որոնք քիւրդ Խալիլի ագդեցութեան շրջանակին մէջ են, հանրագիր մը ստորագրել կուտան բռնի, յայտարարող թէ 6-7 յեղափոխականք միայն գտնուած են ի Զբաղանք. որոնք զօրաց հետ կուռեր ու սպաներ են, և ուրիշ անձի կորուստ չկայ։ Ճընշումներ ի գործ կը դրուին Բաղէշի առաջնորդի դէմ այս գիրը հաստատել տալու համար և կը յաջողին սպառնալեաց ներքև եթէ ոչ պարունակութիւնը՝ գէթ ստորագրութիւններն վաւերացնել տալու։

Եւ մինչդեռ բուն իրողութիւնն այն է, որ Զբաղանքի մէջ բնաւ յեղափոխական չէ գտնուած, ոճիրն արդարացնելու համար՝ յեղափոխականք հոն մուտ գտած էին, կըսուի. մինչդեռ Զբաղանք գիւղն 30-35 տնուոր ժողովուրդէ բաղկացած էր՝ 150-200 բնակիչներով, կըսուի թէ չորս տունէ կը բաղկանար 27 բնակչով. մինչդեռ 10-15 հոգիէ զատ՝ բոլոր բնակիչք սպանուած են, կըսուի թէ 16 յեղափոխականք սպանուած են միայն և անոնց հետ ալ երեք անմեղներ զոհուած. և մինչդեռ բոլոր գիւղն այրացաւեր ու քարուքանդ եղած է, կըսուի թէ՝ գոմ մը միայն այրուեր է։

ՔԱՅԼԵՆՔ

Յուսահատուել մեղք է, ընկեր,
Արիացիր, ոգի ա՛ռ, —
Նայիր, փայլեց հեռուում լապտեր...
Մենք էլ կառնենք շուտ դադար։

Արիացիր, սիրտ ա՛ռ, ընկեր,
Հարունակենք մեր ուղին, —
Լսիր, կարծեմ, թէ զանգակներ
Ղօղանջեցին սարերին...

Ահա բացուեց աղօթարան...
Վստահ, ընկեր, առաջ քայլենք...
Զինուոր ենք մենք արդարութեան
Եւ անփորձ տեղ կը հասնենք։

ԴԱՐԴՎԱԹԱՆԻ

ԹԵՐԹՕՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՈԳԻՆ

Սև, մռայլ գիշեր. դուրսը ցուրտ է ու խաւար։ Քամին խաղում է ծխնելոյզի մէջ, խօսում է հազար ու մի բաներ... Այսօր ես ուզում եմ հասկանալ այդ յաւիտենական լալկանի սուգն ու շիւանը և ականջ եմ դնում շունչս բռնած, սրտատրոփ։ Թւում է ինձ, թէ նա պատմում է ինձ, խօսում է սրտիս մօտիկ բաներ, խօսում է ծանօթ վայրերից, բայց հէնց այն վայրկենին, երբ կարծում եմ որոշել ուէ հասկանալի հնչիւն, նա մի ուժեղ շնչով խառնում է ամէն ինչ, աղմկում է, ոռնում և կորչում հեռո՜ւ, հեռո՜ւ... Ո՞ւր է գնում նա այսպէս։

Տաս տարի՜... Այսօր լրացաւ տաս տարին այն օրուանից, երբ ես պանդխտութեան գաւազանը ձեռք առած, թողի վաթանս, դարձայ թափառական, անապատական, ղարիբ։ Մենակ եմ սենեակումս։ Վառարանիս մէջ մեղմիւ վառւում են փայտի վերջին կտորները՝ ոլոր մոլոր բոցեր շինելով։ Նրանց երերուն լոյսը սենեակի մէջ շինում է դողդոջուն ստուերներ, որոնք նոյնպէս շարժուում են, նոյնպէս անհանգիստ, անհաստատ են։ Ամէնից տարօրինակը սակայն իմ աթոռի ստուերն է. նա երերուում է մերթ դէպի ձախ, մերթ դէպի աջ, բարձրանում է, իջնում, լայնանում է, նեղանում և կարծես ջանք է գործ դնում մի բան դառնալ, մի ձայն հանել, մի բան ասել։

Տարօրինա՜կ գիշեր է։ Շուրջս ամէն ինչ լեզու առած՝ կարծես խօսում է ականջիս խորհրդաւոր փսփսոցով, միակերպ, անընդհատ շշուկով։ Խօսում են և՛ քամին, և՛ կրակը, և՛ կարասիները...

Ես նայում եմ բոցերին և մտածում լուռ։ Ես մտածում եմ դրսի խաւարի մասին, մտածում եմ շարժուն ստուերների մասին, մտածում եմ մանաւանդ քամու բազմազան ձայների մասին, որ չի դադարում սգալ իմ ծխնելոյզի մէջ։ Օտար երկրում, ցուրտ, խաւար գիշերին, մենաւոր սենեակում քամու լալկան հառաչանքներ... Ո՞րտեղից են գալիս նրանք. չե՞ն անցել արդեօք այն մոռացուած գիւղի վրայով, ուր շատ տարիներ առաջ ես օր ու արև եմ տեսել, խնդացել և արտասուել, վշտացել և ուրախացել եմ։ Վաթա՜ն... Խեղճ էիր, երբ վերջին անգամ քո օդը ծծեցի, քո ջուրը խմեցի, քո արևը, քո երկինքը տեսայ. ի՞նչ ես դու այժմ. միթէ՞ էլի խեղճ, էլի ցաւոտ։ Ծա՜նր, սև ըոպէնե՛ր, ի՞նչպէս ազատուել ձեզանից, ի՞նչպէս ցրուել մենակութեան, օտարութեան ձանձրոյթը, մռայլ գիշերայ այս ճնշող թախիծը։

Ցուրտ է դուրսը, ոռնում է քամին. ի՞նչ փոյթ, ես կուզէի այդ լալկան թափառականի պտոյտների մէջ ընկնել այս ժամին, տարուել նրա փոթորկածին թևերի վրայ, պատռել այս սրտաճաք գիշերուայ խաւարը և՝ աստղերի տակից, ամպերի վրայից կտրելով սև անհունութեան մի մասը, տեսնել այն խրճիթները, ուր երևի քամին չի լալիս, ուր բոցերը չեն խօսում, ուր ստուերները չեն երերում, ուր մենաւոր սենեակը չի ճնշում, այլ հարազատ մերձաւորներ՝ մեծ ու փոքր՝ շաբաթ են տաք թոնրի շուրջը և պառաւ տատի հեքիաթներին ականջ դնելով՝ յօրանջում են ձմերային երկար գիշերայ երեսին, և ապա քուն մտնում խաղաղ ու հանգիստ։ Երջանկութեան քաղցրիկ երազնե՛ր, ո՞վ կըտայ ձեզ ինձ։ Եւ դրսում ոռնում է քամին մերթ ինչպէս ապաստան խնդրող թափառական, մերթ ինչպէս զաւակը փնտրող մայր, որ աղերսում է ասել, թէ ո՞ւր է իր թանկագին կորուստը։ Ներսում օրօրուում են բոցերը և սենեակի պատերի վրայ խաղում են ստուերները երերուն ձևերով։ Փայտերը վառեցին, մնաց մի հատիկ կրակ, նա դեռ պլպլում է շուրջն իշխող մոխիրների մէջ։ Ամէնքը մեռան, նա միայնակ է. սգո՞ւմ է արդեօք իր ընկեր լոյսերի մահը թէ ապրելու ցանկութիւնն է՞ բուռն։ Ինձ ի՞նչ փոյթ, ես գոհ եմ, որ նա դեռ պլպլում է։

առանց Նրան իմ մտքերը ձայն կառնեն-կը գոռան, ոգի կառնեն և կը խաղան սենեակիս մէջ, ինչպէս այն աթոռի ստուերը։

Եւ բոցը շարունակում է պլպլալ և ստուերը շարունակում է երերալ, և քամին խօսում, խօսում է ծխնելոյզի մէջ։ Ցանկարծ քամու մի ուժգին հոսանք վերից վար իջաւ ծխնելոյզով և իմ խղճուկ բոցը մարեց, ինչպէս մի չար հրեշտակ, որ խլում է հոգևարք մանկան վերջին շունչը։ Սենեակս կորաւ խաւարի մէջ, և զարմանալի բա՜ն... աթոռի ստուերը չշնչուեց. նա դեռ շարունակում է խաղալ պատի մակերևոյթի վրայ, բայց գունափոխուած. միապաղաղ խաւարի մէջ այդ նախկին ստուերը այժմ լուսաւոր կերպարանք առաւ և շարունակում է երերալ։ Ես զարմացած նայում եմ. սա ի՞նչ հրաշք է. խաւարից լոյս ծնուեց...

Եւ շարունակում է դողդողալ այս անօրինակ լոյսը։ Ահա նա ձգուեց, երկարացաւ, սենեակը լուսաւորուեց, և իմ առաջ կանգնեց մի գեղանի կոյս, արևելքի մի գեղեցկուհի։ Մազերն անխնամ փռուած ուսերին, աչքերը խորունկ ու սևորակ, հայեացքը տխուր ու անհուն. դէմքը վշտոտ ու գունոտ և երկու կաթիլ մարգարտանման արցունք կախուած են իր չքնաղ կոպերից։ Նա դողդողում է. մի հատ ծածկոյթ հազիւ է սքողում նրա գիւթիչ մերկութիւնը. նա մրսում է կարծես և աշխատում է կծկուել անկիւնում։ Գեղանի աչքերի ցաւոտ հայեացքն ինձ ուղղած՝ նա նայում է անթարթ, և լուռ է։

— Ո՞վ ես դու կոյս, հարցնում եմ ես։

— Ե՞ս... չե՞ս ճանաչում ինձ. ես այն երկրի Ազատութեան Ոգին եմ, որի կարօտով այրուում ես դու, որից հեռացել ես ահա տաս տարի։ Ես էլ եմ ղարիբ...

— Դո՞ւ. ինչո՞ւ։

— Ե՞ս ինչու... և այդ դո՞ւ ես հարցնում։ Եթէ դու ղարիբ ես միայն տասը տարով, ես ղարիբ եմ իմ վաթանից դարերով։ Ինձ այնտեղ չեն ճանաչում այլևս։ Ես հալածուած եմ ու թափառական. ես դողում եմ երկնքի անսահմանութեան մէջ, ես տարուում եմ մրրիկների հետ և նրանց հետ միասին սրտաճաք ողբեր եմ ասում, վերի՜ց, վերի՜ց, աշխարհի վրայ, որ լսեն ամէնքը, լսեն մանաւանդ ղարիբ-ղուրպատները։ Ամբողջ դարեր է, որ ես սգում եմ, արտասուում եմ այսպէս, բայց ահա տասը տարի է ես արիւն-արցունք եմ լալիս, և ամպերն են դողում իմ հառաչանքից, երկինքն է լալիս իմ անհուն ցաւով, իսկ երկիրը խուլ է, երկիրը անսիրտ... Ա՜խ ժայռ են կտրել մարդկանց սրտերը։

— Իսկ այստեղ ինձ մօտ ինչո՞ւ ներս մտար։

— Դու կանչեցիր ինձ։

— Ե՞ս քեզ կանչեցի։

— Հապա դու չէ՞իր կարդում քամու ձայները, դու չէ՞իր ուզում տարուել մրրիկների հետ դէպի այնտեղ, որտեղից մենք երկսով էլ հալածական ենք. ես քամու մէկ մասն եմ, Նրա ընկերն եմ։ Դարձեալ ուզո՞ւմ ես այնտեղ գնալ։

— Ուզում ե՜մ, իհարկէ ուզում եմ. բայց դու կարո՞ղ ես տանել ինձ։

— Գնանք, թէ ուզում ես։

— Հիմա՞։

— Այո՛, հէնց հիմա. բռնի՛ր ձեռքս։

Ես բռնեցի նրա աջ ձեռքը. նա շարունակում էր դողդողալ։ Միւս ձեռքով նա մեղմիւ քսեց աչքերիս. սենեակը կորաւ իմ հայեացքից, և յանկարծ մենք թափ առանք միասին. նա ծխնելոյզի մէջ մտաւ և ինձ յետևից քաշեց։ Էլի մի վայրկեան, և մռնչացող քամու այլանդակ պտոյտների հետ մենք տարուում էինք դէպի արևելք։

Եւ թռչում ենք մենք ինչպէս մրրիկ։ Շատ ճանապարհ կայ։ Անցնում ենք գետեր լայն ու ահաւոր, անցնում ենք ծովեր՝ զայրացած ու աղմկալի, որոնց ալիքների դղրդը երկինքն է դողացնում։

— Ահա մեր գետը, ճչացի յանկարծ ես ուրախաձայն։

— Իզո՞ւր, այդպէս մի ոգևորիր, դա ձեր գետը չէ։ Ես լռեցի. թռչում ենք դարձեալ։

— Ահա ձեր գետը, ասում է ինձ ուղեկցուհիս։

Ես նայում եմ. ժայռոտ ափերի մէջ հոսում է նա ինչպէս կատաղած վիշապ, յորձանքներ է տալիս և մռնչում, բայց ամբողջապէս կարմիր է։

— Սա չէ մեր գետը, բացականչում եմ ես. մեր գետը վճիտ է ինչպէս վաղորդեան ցող. նրա մէջ խաղում են պլպլան աստղերը, նա երկնքի հայելին է, իսկ սա պղտոր-կարմիր է հոսում։

— Այս է ձեր գետը. ձեր երկրում այժմ ջրերը կարմիր են, հողերը սև...

— Դէ՜, շուտ անցնենք այստեղից. ես շշմում եմ, գոլորշիները խեղդում են ինձ...

Եւ մենք թռչում ենք շտապով։

Ահա մեր ոտքերի տակն է մեր մեծ լիճը՝ ձկնաշատ ու վճիտ, որի ափերին տաս տարի առաջ ես թողեցի այնքան շէն գիւղեր ու աւաններ։ Ես զգում եմ յանկարծ իմ ձեռքի վրայ արտասուքի կաթիլներ.—ուղեկցուհիս է. նա դողդողում է և արտասուում։

— Ինչո՞ւ ես արտասուում, հարցնում եմ ես։

— Ինչո՞ւ եմ արտասուում... Ամենախոր վէրքը վշտացած հոգուս այստեղ հասցրին. արեան ու սգի այն աւերներում ոչ ոք չուզեց ճանաչել ինձ այստեղ. ամէնքը լուռ կացան փոթորկի առաջ, որ արեան հեղեղում խեղդեց ամէն ինչ։ Այժմ մեծ մեռելութիւն է իշխում այստեղ։ Ամէն տեղից, ուր հալածում են ինձ, մահին է մնում իշխանութիւնը։ Եւ ամէն անգամ, երբ մոլորուած ու վշտաւոր ես անցնում եմ այս արիւնոտ վայրերից, ուր բանական, ազատ մարդը մի օր անարգեց ինձ իր անպատիւ, ստրկական մահով, ես դողում եմ ցաւից, և ակամայ արցունքը թափուում է աչքիցս։ Ողբալի՜ Արձէշ, վերա՜ն Ալջավազ...

Վար ենք իջնում։ Մի գիւղ է, լուռ, մեռած գիւղ. կեանք չկայ, ո՛չ խօսք, ոչ զրոյց, ոչ ճիչ, ոչ ծիծաղ

— Այս լռութիւնն է, որ հալածում է ինձ, ասում է ուղեկցուհիս. և քանի՜ն են այդպէս. կեանք չկայ, և ես փախչում եմ։

Տներից մէկում լոյս կայ։ Ներս ենք մտնում։ Ճրագը հազիւ պլպլում է, ճիշդ ինչպէս իմ վառարանի մեռնող բոցը. միայն այստեղ ստուերներն աւելի սարսափելի են. նրանք խօսում են ինչ որ ահագին ցաւից, որ հազարգլխեան վիշապի պէս իր երկաթեայ ճիրաններում ճնշում է այս խրճիթները և ստիպում է, որ լռեն, չճչան, չհառաչեն իսկ։ Լուռ են այն պառաւն ու ծերուկը, որոնք կծկուել են սառը թոնրի վրայ ցնցոտիների տակ։

— Ո՞ւր են ձեր երեխաները, հարցնում եմ ես ծերերին։ Պատասխանի փոխարէն իմ վրայ են ուղղւում չորս մարած աչքեր և նայում են առանց հասկանալու իմ հարցը, առանց թարթելու. նայում են ինչպէս կը նայեն ապակուց շինուած աչքերը։ Զարհուրելի է. ես դողում եմ այդ հայեացքի ցրտութիւնից, ես զարհուրում եմ ցաւի մեծութիւնից...

— Գնանք, ասում եմ ուղեկցուհուս. ի՞նչ ցուրտ է այստեղ։

Եւ մենք գնում ենք։ Հեռու երևում է մի այլ գիւղ, ամբողջապէս լուսաւոր։

— Ա՛յ այնտեղ գնանք. տե՛ս, այնտեղ կեանք ու կենդանութիւն կայ, այնտեղ լոյս-ճրագ կայ, այնտեղ երևի այսպէս ցուրտ չի լինի, երևի մարդիկ ուրախանում են. տե՛ս, կարծես երգի ձայները մինչև մեզ են հասնում։

— Լո՛ւռ կաց, իմ ընկեր, լո՛ւռ. դու ծաղրում ես թշուառութիւնը. առանց այն էլ նա շատ է ծաղրուած անսիրտ աշխարհում, գէթ դու լուռ եղիր։ Այդ բոցերում մի գիւղ է խորովւում. մարդիկ երգում են, բայց մահու մեղեդին. լեռներն են ճչում նրանց հառաչանքից... Լո՛ւռ, ծածկիր աչքերդ և անցնենք։ Այդ խոհեմութիւն է. այժմ ամէնքը ծածկում են աչքերը։

Եւ թափով անցնում ենք ծխի և բոցերի վրայով, և իմ ականջներում հնչում են սարսափի ձայներ...

— Այս չէ՛ իմ վաթանը, ճչում եմ ես։

— Այո՛, իրաւունք ունես. անտէր ու անպաշտպան ձգուած վաթանը տաս տարուց յետոյ էլ չի ճանաչուի։

Ուղեկցուհիս նայում է ինձ. այժմ նա է հարցնում.

— Ինչո՞ւ ես արտասւում։

— Ես չեմ արտասւում, այստեղ արցունքը անկախ է մարդուց, այստեղ նա ինքիրան հոսում է, հոսում... Նա հոսում է վշտից, զայրոյթից, հոսում է մանաւանդ ամօթից։

— Ամօթի արցո՞ւնք,—այո՛, այդ լաւ է, բայց նրանից աւելի՝ ես սիրում եմ զայրոյթի արցունքը—բուռն կատաղութեան, անյագ վրէժի փրկարար արցունք... Այդ արցունքից թափել գիտե՞ս դու։

— Ասա՛ ինձ, ո՞րտեղից և ո՞վ թափեց այս երկրում այս ծով ցաւերը. ո՞րտեղից փչեց այս հրեղէն փոթորիկը. ո՞վ է հեղինակն այսքան հառաչանքի։

Ո՞վ—մի մարդ. ո՛չ, մի գազան։ Գնանք՝ կը տեսնես։

Դարձեալ թռչում ենք։ Այժմ մեր ոտների տակն է մի հսկայական մռմռացող քաղաք չորս կողմից պատած ջրերով։

— Ո՞ւր ենք մենք։

— Այնտեղ, որտեղից ծնւում է այն ահագին չարիքը և շէն երկիրներ աւերակ դարձնում։ Սա մեծ գազանի որջն է։ Այստեղ է լափում նա իր արիւնոտ զոհերը։ Տես այն ջրերը. իրենց խաղաղութեան տակ անհուն ցաւերի շտեմարան են թագցնում, աստղերն ամաչում են պլպլալ այնտեղ, երկինքը մթնում է այնտեղ նայելիս։ Երբեմն լուռ գիշերին ես նայում եմ վերից, ալիքները աղմկում, յուզւում են գազանի ոճիրներից, բայց այդ նրա փոյթը չէ. նա թաղում է այս ջրերի տակ հարիւրաւոր անմեղներ ու նրանց հառաչանքներին պատասխանում է քրքիջով, և ես փախչում եմ լալով՝ անհունութեան մէջ խեղդելու իմ վիշտը։ Անէծք այս ծովին, անէծք իր ջրերին...

Մեր ոտքերի տակն է մի մեծ սև զանգուած, վռայլ ու այլանդակ, ինչպէս խորհրդաւոր հրէշ։ Այնտեղից հասնում են մեզ տարօրինակ ձայներ, հառաչանք, հեծեծիւն, երկաթի շռինդ, խուլ և ահաւոր։

— Լսո՞ւմ ես այդ ձայները։

— Մտքի և խղճի վրայ բազմած դարաւոր սֆինքսն է այն, որ ուշ գիշերին կատակ է անում իր զոհերի հետ։ Նրա երկիւղից դողում է երկիրը, և տիեզերքի ազատ Ոգին՝ իմ մայրը, մռայլում է իր պայծառ ճակատը։ Այնտեղ դեռ երբէք ես ոտք չեմ՝ կոխել։ Այնտեղ ժամանակը չի քայլում այլևս. նա անշարժ է ու սառած։ Ներսում ամէն օր, ամէն ժամ անարգւում է մայր բնութիւնը. դա նրա չքնաղ մարմնի վրայ զզուելի պալար է, դա մի բանտ է։ Քանիսն են այնտեղ իմ սիրելիներից, և քանիսը՝ կախաղանների վրայից իրենց զայրոյթի վերջին աղաղակն ինձ յանձնելով, բռնութեան երեսին փրփուր թքելով, փչեցին շունչերը։ Ես ծով վրէժի կտակներ ունեմ, որ ման եմ ածում ինձ հետ ամպերում և մխում եմ կայծակներով. ե՞րբ կը ճայթի... Մի օր...

Այժմ մեր առաջն է մի ուրիշ շինութիւն, բարձր ու ընդարձակ, բազմաթիւ դռներով և լուսամուտներով։

— Նայի՛ր այստեղ, ասում է ինձ ուղեկցուհիս. եթէ դիակներով յղփացած այդ ալիքների ափին, տանջանքով լեցուն այդ բանտի կողքին, մարդակեր գազանի որջից ոչ-հեռու չլինէր այս շէնքը իր յիշատակներով, ես ցաւից ու զայրոյթից սրտաճաք կը լինէի այս տեղով անցնելիս։

— Բայց այդ շէնքը լուռ է ու խաւար. ես ոչինչ չեմ տեսնում, որ մխիթարէր, որ...

— Ոչի՞նչ... Զգոյշ, իմ ընկեր, մի շարունակիր։ Յիշատակներ կան իմ թափառական դարաւոր կեանքում, որոնք վառ ջահերի պէս լուսաւորում են անհունութեան մէջ իմ խաւար ուղին։ Այստեղ է նրանցից մէկը։ Այս շէնքը միշտ այսպէս լուռ ու խաւար չէր։ Մի օր նա լուսաւորած էր շանթերի փայլով. մի օր նա ոռնում էր ինչպէս վիրաւոր առիւծ և բոց էր ժայթքում բոլոր անցքերից և մահ էր թափում իր չորս կողմում։ Այն էլ մի օ՞ր էր... Ռումբերի որոտի հետ բանտերի զոհերը ցնցում էին թափով իրենց շղթաները ահաւոր շռինդով. մեծ գազանը դողում էր իր ամուր որջում և իր արբանեակները այս իսկ պատերի տակ պատառ-պատառ փողոտւում էին վերից տեղացող գնդակներից ու արիւն որձկալով՝ գալարւում էին գետնի երեսին։ Վերից էին ընկնում մահացու հարւածները ինչպէս երկնքից ճայթող շանթալից կայծակներ և վառում երկիրը դողում էր ահից։ Վրէժխնդրութեան արդար հատուցման մի վսեմ օր էր։ Ես սաւառնում էի վերից, դիտում էի սիրով իմ սիրելիներին, և մահաբեր գոռոցների հետ իմ խորունկ ծիծաղն էր հնչում բոցերի և ծխի մէջ։

Ա՜խ, այդ մի՛ օր էր... Այդպիսի օրեր շատ են հարկաւոր, որ ես դադարեմ թափառելուց երկրէ երկիր, մոլար ու անապաստան։

— Անապաստա՞ն... Մի՞թէ այս իմ ընդարձակ վաթանում ոչ ոք քեզ մի անկիւն չի տալիս երբէք, որ գէթ մի օրով դու հանգիստ առնես, որ գէթ մի ժամի ապաստան ունենաս։

— Օրերի ապաստան ես շատ ունեցայ. գնանք, կը տեսնես։ Անցնենք դարձեալ դէպի մեծ լիճը։ Մենք կրկին թռանք և անցանք նոյն գիւղերի վրայով, կրկին չափե-

ցինք նոյն սարերն ու ձորերը։ Առաջներս մի քաղաք է մեծ լճի ափին. ես լսում եմ ուղուկցուհուս մեղմ մրմունջները. աղօթո՞ւմ է արդեօք թէ՞ դարձեալ արտասուում. այդ չեմ որոշում. բայց պարզ լսում եմ „Պետո՞“, „Վազգէ՞ն“ անունները, որ սիրահարի շեշտով հնչւում են իմ ականջներում։

— Այստեղ էր, իմ ընկեր, ուր ամբողջ ամիսներ Վազգէնի ու Պետոյի հետ ես շրջում էի... Ի՜նչ կեանք էր. օրե՞ր տեսայ, շո՞ւնչ առայ, ազա՞տ շունչ, որ փչեց անցաւ այս քաղաքի և իր շրջակայքի վրայով, մի պահ լուսաւորեց խաւար հոգիները, թափ տուեց մեղկացած մարմինները և յետոյ... Է՜հ, լաւ է լուռ կենալ. անցնենք։

Եւ մենք դիմում ենք դէպի հարաւ, ուր ցցւած են շարիշար լեռներ։

— Տես այս լեռնաշղթան, ասաց ուղեկցուհիս, լճից դէպի հարաւ։ Ամիսներ առաջ ես վար իջայ այստեղ մի քաջի կողքին և նրա հետ միասին ապրում էի այս ձորերում, նրա հետ պարկում այս ժայռերի մէջ, նրա հետ շրջում ու նրա հրացանի հովանու ներքև հանգիստ էի առնում։ Հսկայ էր Սերոբը, սարերի տէրն էր, մենք ազա՞տ էինք... Բայց մի փարթամ վարդն էլ գարուն չի բերի. դաւաճան ձեռքերը այն էլ պոկեցին այս չոր անապատից, և ես մնացի դարձեալ թափառական ու սգաւոր։ Անցնենք այստեղից. դաւաճանութեան պատճառած ցաւը ամէնից մեծ է։

Առաջ գնացինք։

— Նայի՛ր։ Այստեղ այս հսկայ լեռների խրոխտ կատարներին արծիւների հետ բուն դրած մարդիկ իմ սիրահարներն են։ Այստեղ երբեմն մի քանի օրով ես հանգիստ եմ առնում. այստեղ է, ուր ես չեմ ամաչում, չեմ դողում, չեմ արտասւում, մի քանի անգամ նոյնիսկ ժպտացել եմ։ Կայծակի թափից չեն հառաչում այս կարծր ժայռերը, փոթորկի առաջ չեն ծռւում այս լեռները, մարդն այստեղ չի դողում որոտից, և գնդակների տարափի տակ արցունք չքամեցին սասունցիք. մեռան ընկճւած, բայց դա մի մահ էր... փառաւո՞ր ու վե՜մ, և ես ժպտացի... Նրանք էլ ընկնում էին մի հպարտ ժպիտով. մեռելութիւնն այստեղ գործ չունի. ես այստեղ տէր եմ։ Տէր եմ և այնտեղ։

— Ո՞րտեղ։

— Ա՛յ, այնտեղ, և նա մեկնեց մատը գէպի հիւսիս-արևմուտք։ Այս ծովից այն կողմը լեռներ կան, սրանց պէս հսկայ, սրանց պէս խրոխտ։ Սասունի մեծ եղբայրն է այնտեղ, քինոտ ու ըմբոստ, յիշաչար ու հպարտ։ Այս կողմերի ամենախուլ հառաչանքը այնտեղ որոտի է փոխւում—հրացանի որոտ, զայրոյթի որոտ։ Զէյթունն է այնտեղ... Երբ այստեղ ցուրտ է, այնտեղ եմ գնում. տեղ ունեմ այնտեղ... Լո՛ւռ. էլ չխօսենք...

Մենք թողնում ենք նաև այս հպարտ լեռները, որոնք իմ ուղեկցուհու սիրած վայրերն են, և թռչում ենք արագ։ Մեր ոտքերի տակն է այժմ մի ընդարձակ դաշտ, ուր սև-սև բլուրներ, ինչպէս հսկայ ուրուականներ, պառկած են իրար կողքի անշարժ ու լուռ, կարծես նիրհում են խաւարի մէջ։

—Խանասո՞ր, խանասո՞ր... Ճչաց ուղեկցուհիս։ Օրհնա՜ծ բլուրներ, սրբազա՜ն վայրեր, ողջոյն ձեզ։ Տե՛ս, իմ ընկեր. այստեղ էին ձգած շարէշար վրանները այն գազանների, որոնք Գարահիսարի ժայռոտ փէշերը սրբելիներիս արիւնով ցօղեցին մի օր, և խաղաղ ու հանգիստ ամարային պայծառ գիշերներին՝ պարկած թաւ կանաչի վրայ, նայում էին երկնքի պլպլան աստղերին, յօրանջում էին ու պատմում իրար արիւնոտ գործի թարմ պատմութիւնը և երգում էին իրենց յաղթանակի գոռոզ երգերը։ Եւ յանկարծ մի օր այն լերան մէջքից մի քանի հարիւր հրացանի որոտը խեղդեց նրանց կոկորդում երգի հնչիւնը և մարեց նրանց պիղծ շրթունքներին հպարտ խօսքերը։ Վրէժխնդրութեան ժամն էր հնչել։ Այստեղ էլ ես սաւառնում էի վերից և գազանների օրհասական հռնդիւններին ականջ էի դնում սիրով. ժպիտով։ Այդ էլ մի օ՞ր էր... Ափսո՜ս միայն մի՜ օր...

— Ե՞րբ կը բազմանան Խանասօրները։ Զէ՞ դու աշխարհ ես շրջում. դու պիտի գիտենաս։

— Երբ որ ժեռ կտրած սրտերը կը հալւեն, երբ կոյր ձևացող աչքերը կը բացւեն, երբ խուլ ձևացող ականջները կը լսեն, երբ անզգայ մարմինները ցաւ կը զգան,—արցունքների փոխարէն, վառօդը կը խօսի, հառաչանքի փոխարէն հրացանը կ՝որոտայ և շանթերի ձայնից լեռները կը դողան։ Բայց դեռ շատ են խուլերը, բազմաթիւ կոյրերը, անզգայ սրտերը անթիւ են։ Գնա՜նք։

Եւ մենք թռչում ենք դարձեալ։

— Ո՞ւր կուզես, որ այժմ տանեմ քեզ։

— Տար ինձ էլ այնտեղ, ուր դու ես գնում։ Տար քեզ հետ՝ վե՜ր, վե՜ր։ Ես էլ եմ ուզում այնտեղից անցնել, սահել աշխարհի վրայով փոթորկի կատաղի պտոյտների մէջ, մռնչացող քամու ոլորտների հետ քեզ պէս ուզում եմ մտնել ծխնելոյզների մէջ խաւար գիշերին, ողբ ու սուգ ասել, հառաչանք երգել, հեծեծել խորունկ, խանգարել աշխարհի քունն ու հանգիստը, թոյն խառնել երջանիկների անհոգ վայելքին, թափառել անվերջ երկրի վրայով մինչև մեղմանայ ցաւը վառնում, մինչև որ դադարի արցունքն մեր երկրում... Ա՜խ, աղաչում եմ, տար ինձ էլ քեզ հետ. ես էլ եմ քեզ պէս հալածական ու սգաւոր, ես էլ եմ քեզ պէս զարիբ ու անապատան։

— Գնանք, իմ խեղճ, թափառական ընկեր. գնանք պատմելու ինչ որ տեսել ենք. գուցէ աշխարհը միշտ խուլ չմնայ, գուցէ սրտերը միշտ քար չմնան...

Եւ մենք թռչում ենք անհունութեան մէջ, թռչում ենք անվերջ մրրկի շնչով, խառնում ենք մեր հեծեծանքը քամու մռնչոցին, նրա հետ միասին ցաւեր ենք երգում և սուգ ենք ասում աշխարհի վրայ. ուժով ճչում ենք խուլ ականջներում, թափով ցնցում ենք նիրհող ոգիները, վրէժխնդրութեան ժամն ենք պատրաստում։ Տաս տարւայ թափած ծով արիւնն է բողոքում մեր շրթունքներով. — Խ ա ն ա ս օ ր է պէտք, Խ ա ն ա ս օ՛ ր...

ՂԱՐԻԲ

ԱԶԴ

„Դրօշակի“ ներկայ հատորին կցւած է իբր Ցաւելւած „Դրօշակի“ տաս տարւայ „Նիւթերի Ցանկը“ (1890—1900)՝ բաղկացած 8 երեսից։ Շարունակութիւնը կը տանք յաջորդ հատորների հետ։